Ազգ Azg

27 ՅՈՒՆԻՍ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 108(5191)

ISSN: 1829-1651

# Սեյրան Օհանյան. «Իրավիճակը վերահսկելի է»

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Սա բիզնես է, շուկա», հենց այսպես Երեւանում մեկնարկած փաղափական ռազմավարական երկրորդ՝ «ՀԱՊԿ-ի ռազմական բաղադրիչի ձեւավորման քաղաքական-անվտանգային ուղենիշները» համաժողովի ժամանակ կարծիք հայտնեց ՀԱՊԿ գլխավոր քարտուղար **Նիկոլայ Բորդյուժան**: Հիշեցնենք, որ ըստ լրատվամիջոցներում հայտնված տեղեկության՝ գարնանը Ադրբեջան է մատակարարվել ռուսական ցամաքային ռազմատեխնիկա: Գործարքի ընդհանուր գումարը գնահատվում է 1 մլրդ դոլար: Այս առնչությամբ Բորդյուժան հիշեցրեց, որ Ռուսաստանը զենքի խոշորագույն արտադրողներից եւ մատակարարներից է: «Ռուսաստանը զենք է մատակարարում աշխարհի տասնյակ երկրների, այդ թվում՝ այն երկրներին, որոնք չեն մտնում ՀԱՊԿ կազմի մեջ: Կրկնում եմ, սա բիզնես է եւ Ռուսաստանի տնտեսությունն է: Հարցն այլ է, երբ ոչ ՀԱՊԿ անդամ երկրներին զենք վաճառելիս որոշումը կայացնելու ժամանակ առաջնորդվում են հավասարությունը պահպանելու սկզբունքով: Դա սկզբունք է, որն ուշադրության կենտրոնում է եղել ձեր հարեւանին զենք վաճառելու որոշում կայացնելու ժամանակ», ասաց ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը:



ՖՈՏՈԼՈՒՐ

ՀՀ պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանի** խոսքերով՝ Ադրբեջանի սպառազինմամբ չմտահոգվել չենք կարող, սակայն ռազմատեխնիկական հարաբերությունները ռազմավարական դաշնակից Ռուսաստանի հետ բարձր մակարդակի վրա են: «Այսօր մենք անում ենք ամեն ինչ, որ ուժերի հավասարակշռությունը կարողանանք պահպանել՝ ոչ միայն քանակական, այլեւ որակական առումով:

Տես էջ 3

# Զենք եւ էմոցիաներ

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

*Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում, որտեղ այս օրերին պաշտոնական այցով գտնվում է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, բացվել է «Հայկական պուրակ»: Իսկ մինչ պուրակի բացումը, այսինքն՝ մինչ ՀՀ նախագահի գլխավորած հայկական պատվիրակության այցը Վարշավա, Երեւանում անցյալ կիրակի օրը Սերժ Սարգսյանն ընդունեց եւ բավականին երկարատեւ զրույց ունեցավ ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղար Նիկոլայ Պատրուշեւի հետ:*



## Զենքի առեւտուր

Բայց զենքից սկսենք: Ինչպես գիտենք, Ռուսաստանը զենք է վաճառել Ադրբեջանին, ընդհանուր առմամբ՝ 1 մլրդ դոլարի: Եվ այստեղ ամենակարեւոր բառը ոչ թե Ադրբեջանն է, ոչ թե Ռուսաստանը, ոչ էլ անգամ 1 մլրդ դոլարը, այլ՝ «վաճառելը»: Այսինքն, Բաքուն Մոսկվայից հենց այնպես զենք չի ստացել, եւ սա կարեւոր է, ահա թե ինչու: Միջպետական մի շարք համաձայնագրերով եւ ՀԱՊԿ-ի շրջանակներում կնքված համաձայնագրերով Հայաստանը Ռուսաստանից զենք է ստանում: Հայկական բանակի գլխավոր, եթե չասենք՝ միակ զինամատակարարը հենց Մոսկվան է:

Տես էջ 2

# Կամ հախուռն դատապարտել, կամ հիացմունքով գովել

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Առիթ եղել է ու մի քանի անգամ ասել ենք, որ Հայաստանի քաղաքական ուժերը չեն կարողանում խնդիրներ դնել ու դրանց լուծումներն առաջադրել մասնագիտորեն ու փաստարկված, այլ քարշ են գալիս խնդիրների հետեւից, տարերայնորեն եւ ուշացած արձագանքում դրանց: Այսինքն՝ նրանք իրականում իրենց վերապահված առաջնորդողի, գեներացնողի դերը չեն կատարում, այլ դառնում են միայն ավազե պարկեր՝ այսուայն առիթով ծագած տարերքի դեմն առնելու համար: Վերջին օրինակը կառավարություն- ՎՊ-Ազգային ժողով առճակատումն էր, որտեղ քաղաքական ուժերը նախ հետ ընկան գծված սխեմաներից այն պատճառով, որ ուշ հասկացան տեղի ունեցողը, իսկ հետո էլ կամա-ակամա ձգեցին-երկարացրին լարումը, այդպիսով դեֆորմացնելով բուն հարցը եւ խժդժությանը նպաստելով: Դա առավելապես վերաբերում է իշխող քաղաքական ուժերին, որովհետեւ ընդդիմադիրներն անկախ իրենցից էին հայտնվել այս անգամ բուն իրենց դերի մեջ, ու անգամ չկարողացան էլ նպաստային օգտվել հարմար առիթից: Ու հիմա նոր ուժով դուրս սպրդած իշխանության ներսի հակասությունների վերջը չի երեւում:

Մերոնք գլխավորը եւ երկրորդականը չեն կարողանում դասդասել՝ գլխավոր թեմաները չդարձնելով քննարկման առարկա եւ չփորձելով օպտիմալ տարբերակներ առաջարկել հայերիս համար կարեւոր խնդիրների լուծման առումով:

Ասենք՝ ինչպե՞ս հանգուցալուծել Եվրասիական միությանն անդամակցելու հետ կապված ճնշումներին դիմակայելու բարդ խնդիրը, կամ ի՞նչ միջոցներով ռուսական կողմից ստացվող ազդակները բալանսավորել աշնանը Եվրոմիության հետ նախաստորագրվելիք Ասոցացման պայմանագրի հետ, ի՞նչ գործիքներ բանեցնել դրա համար: Չէ, մերոնք խորհուրդ տվող չեն, նրանք կարող են կամ հախուռն դատապարտել կամ հիացմունքով գովել: Ընդդիմադիրներն ասում են՝ իշխանությունները դավաճան են, զիջում են մեր ինքնիշխանությունը, ծախում են մեր ունեցածը ռուսներին, կամ՝ եվրոպական այլասերվածության են տանում մեզ (անգամ չխորանալով, որ Ասոցացման պայմանագրով եվրոպական ազատ շուկա մտնելու հնարավորությունն է ապահովվում): Իշխանականները պարզապես կոշտուկոպիտ պաշտպանում են իշխանությանը՝ ոչ մի կարգին արգումենտ չմեջբերելով եւ քաղաքական մտահոգությունը չտարանջատելով կառավարման պրագմատիզմից: Կարծես սպասում են՝ ե՞րբ գործադիրը այս կամ այն պայմանագիրը կկնքի, որ իրենք գործ ունենան՝ այդ պայմանագրերի դավաճանական, ծախու կողմերի մասին փրփրեն կամ գովերգեն դրա տնտեսական եւ սոցիալական էֆեկտը: Իսկ թե մինչ այդ իրականում Հայաստանին երկու տարբերակով ի՞նչ օգտակար ու վնասակար բաներ են սպասվում՝ մեր քաղաքական ուժերի ներկայացուցիչներից ոչ մեկն ի վիճակի չէ մանրամասն բացատրել: Արդյոք նրանի՞ց է, որ քաղաքական կուսակցություններում պրոֆեսիոնալ, համակողմանի մասնագետների պակաս կա, ու դրանք լցված են պարզապես թայֆի տղերքով՝ միգուցե:

Տես էջ 8

# Ամերիկյան դեսպանի այցը Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցի

Օրերս իր տիկնոջ հետ Վանա լճի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցի է այցելել Թուրքիայում ԱՄՆ դեսպան Ֆրանսիս Ռիչարդոնեն: Ինչպես հունիսի 25-ին նշել է Նյու Յորքի թուրքական կայքէջը, այցից հետո լրագրողների հետ հանդիպմանը դեսպանն ասել է, որ ինքը Սուրբ Խաչում առաջին անգամ եղել է 33 տարի առաջ, վերականգնումից հետո եկեղեցին ավելի հոյակապ տեսք է ստացել:

Ամերիկյան դեսպանն անդրադարձել է նաեւ քաղաքական խնդիրներին, մատնանշելով, որ առաջխաղացում է արձանագրվում Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացում, ապա ավելացրել է. «Տեսանելի են այդ առաջխաղացման արդյունքները: Այս տարի անցյալի համեմատ 4 անգամ ավելացել է Աղթամար այցելող զբոսաշրջիկների թիվը»:

Թե ինչ կապ ունի Աղթամար կղզի այցելող զբոսաշրջիկների թիվը Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունների հետ, գիտի միայն Թուրքիայում ԱՄՆ դեսպանը, բայց չի ասում, որովհետեւ... ալարում է:

Հ. Չ.

# Ռուսաստանցի զինծառայողները հեռացան Սիրիայից

Ռուսաստանը իր ամբողջ զինվորական անձնակազմը դուրս է բերել սիրիական Տարտուս քաղաքի նյութատեխնիկական մատակարարման կետից, հաղորդում է «Վեդոմոստի» թերթը՝ վկայակոչելով ՌԴ պաշտպանության նախարարության աղբյուր:

Թերթի տվյալներով՝ Սիրիայից զինվորական անձնակազմը դուրս բերելու որոշումը թելադրված է նրան վտանգի չենթարկելու ցանկությամբ: Բացի դրանից՝ պաշտպանության նախարարությունում երկյուղներ ունեին, որ ռուսաստանցի զինծառայողների մասնակցությամբ որեւէ միջադեպ կարող է աննպաստ քաղաքական արձագանք հարուցել: Այդ պատճառով ներկայումս Տարտուսում չկան ռուսաստանցի ոչ միայն զինծառայողներ, այլեւ քաղաքացիական զինծառայողներ:

ՌԴ փոխարտգործնախարար Միխայիլ Բոգդանովը ավելի վաղ արաբական մամուլին հայտարարել էր, որ Տարտուսի նյութատեխնիկական մատակարարման կետը չունի ռազմավարական նշանակություն: Թերթի կարծիքով, դա պայմանավորված է նրանով, որ ՌԴ ծովուժի օպերատիվ միավորման նավերը Միջերկրական ծովում կարող են իրենց պաշարները համալրել Լիմասոլի նավահանգստում:

Բացի դրանից՝ Կիպրոսի արտգործնախարարը օրերս չբացառեց, որ Ռուսաստանի օդուժը կարող է օգտագործել Պաֆոս քաղաքի օդանավակայանը: ՌԴ պաշտպանության նախարարության աղբյուրը պարզաբանել է, որ խոսքը ռազմափոխադրական օդանավերի մասին է, որոնք կկարողանան փոխել միջերկրածովյան էսկադրայի ռազմանավերի անձնակազմերը կամ տեղ հասցնել նորոգման համար անհրաժեշտ մասնակներ: Ըստ որում, չի նախատեսվում Կիպրոսում ստեղծել լիարժեք ռազմակայան:



Տարտուսի նյութատեխնիկական մատակարարման կետը գոյություն ունի խորհրդային ժամանակներից: Հարավսլավիայի եւ Ալժիրի նավահանգիստների հետ մեկտեղ այն օգտագործվում էր ԽՍՀՄ ծովուժի 5-րդ օպերատիվ էսկադրայի նավերի նորոգման, անձնակազմերի հանգստյան եւ պաշարների համալրման նպատակով: Այդ էսկադրայի խնդիրը ամերիկյան նավատորմին հակազդելն էր: Ներկայումս Միջերկրական ծովում գործում է Սեւծովյան նավատորմի հրամանատարին ենթարկվող 16 ռուսական նավերի օպերատիվ միավորում: Այդ ռազմանավերի խնդիրն է՝ պայքարել ահաբեկչության եւ ծովահենության դեմ:

Պ. Ք.

# Թմրանյութերից կախվածությունը բուժվում է կենսաբանորեն ու հոգեբանորեն

ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի 1987 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ ամեն տարի հունիսի 26-ը նշվում է որպես թմրամիջոցների չարաշահման եւ դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային օր:

Առողջապահության նախարարությունը տեղեկացնում է, որ այս տարվա համար կարգախոս էր ընտրվել՝ «Թող քո նոր թմրամիջոցը դառնա առողջ ապրելակերպը»:

Նախարարությունը վստահեցնում է, որ կշարունակի առավել հաստատակամությամբ զբաղվել թմրամոլության կանխարգելման, թմրամոլությամբ հիվանդ մարդկանց հասանելի եւ որակյալ բժշկական ծառայություններ տրամադրելու եւ թմրամոլության հասցրած վնասները նվազեցնելու գործով:

Հայաստանի առողջապահական համակարգի նարկոլոգիական ծառայության կողմից ներկայումս հաշվառված է 4332 թմրամոլ: Հաշվառվածների գերակշիռ մասը 28-49 տարեկան են:



Երեկ թմրամոլության դեմ պայքարի թեմայով կազմակերպված ասուլիսի ժամանակ հոգեբան Սամվել Խուդոյանը նշեց, որ թմրամոլություն կա նաեւ դեռահասների շրջանում: Դեռահասները թմրամոլության են դիմում՝ ընկնելով միջավայրի ազդեցության տակ ու ձգտելով նմանվել քրեական հեղինակություններին: Բայց, ընդհանուր առմամբ, թմրամոլության հիմնական պատճառը, ըստ հոգեբանի, հաճույքից մեծ կախվածություն ունենալն է: Իսկ բուժման արդյունավետությունը կախված է ամեն անձի կենսաբանական ու հոգեբանական առանձնահատկություններից:

Հոգեբանն ասում է՝ կարեւոր է, որ թմրամիջոցներից կախվածության դեմ օրգանիզմը պայքարի ոչ միայն դեղորայքի միջոցով, այլեւ հոգեբանորեն ու կամքի մեծ ուժ ցուցաբերելով: Հետեւաբար, կենսաբանական բուժումից բացի, թմրանյութերից կախվածություն ունեցող հիվանդները պետք է ստանան հոգեթերապեւտիկ բուժում:

**Ի. Պ.**

# Զենք եւ էմոցիաներ

*1-ին էջից*

Վերջերս ստորագրված միջպետական համաձայնագրով, որում, հիշեցնենք, նախատեսվում է, որ Հայաստանում գտնվող ՌԴ ռազմական բազան՝ ՀՀ ԶՈւ-ի հետ համատեղ, պարտավորվում է հոգալ ՀՀ անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը ՀՀ ողջ տարածքով: Ռուսաստանը պարտավորվում է պարբերաբար արդիականացնել ՀՀ ԶՈւ-ի զինամթերային պաշարը: Հետեւաբար այն, ինչի համար Բաքուն Մոսկվային ժամանակ առ ժամանակ փող է տալիս ու գնում, Երեւանը դա ստանում է առանց փողի: Մոսկվան, եթե Բաքվին զենքը վաճառում է, Երեւանին տալիս է: Ընդ որում, Բաքվից ստացած իր եկամուտները Մոսկվան ներդնում է սեփական ռազմական արդյունաբերությունը զարգացնելու համար, ինչի օգուտները քաղում է նաեւ Երեւանը, քանի որ ավելի զարգացած ռազմարդյունաբերությամբ Ռուսաստանից ավելի նորագույն զենք-զինամթերք կգա Հայաստան: Որքան Բաքուն զենք գնի Մոսկվայից, այնքան ավելի նորագույն զենք կստանա Երեւանը Մոսկվայից: Եթե անգամ Մոսկվան հրաժարվի զենք վաճառել Բաքվին, հաշվի առնելով թեկուզ «Հայաստանի հետ իր ռազմավարական հարաբերությունները», ապա հասկանալի է, որ 1 մլրդ դոլարը ձեռքին Ադրբեջանին աշխարհի մյուս զինավաճառները չեն մերժելու, հետեւաբար՝ Բաքուն իր ուզած զենքը գնելու է: Եվ առնվազն տարօրինակ կլիներ, եթե այս համատեքստում Մոսկվան մերժեր ադրբեջանցիներին, քանի որ եթե Բաքու է գնում ռուսական զենքը, դա նշանակում է, որ Բաքու չի գնա ոչ ռուսական զենք:

Մինչդեռ Հայաստանում, ինչ ռուսական «Վեդոմոստի»-ի ՌԴ ՊՆ-ին մոտ կանգնած աղբյուրը հայտնեց այս տեղեկությունը, խիստ քննադատական հրապարակումներ ու մտքեր են ուղղվում Ռուսաստանին, ընդհուպ, որ «զենք վաճառելով Ադրբեջանին Մոսկվան դավաճանել է իր ռազմավարական գործընկեր Հայաստանին»:

Հասկանալի է, որ սրանք էմոցիաներ են, ոչ ավելին, քանի որ եթե ելնենք նույն էմոցիոնալ մեկնակետից, ապա ինչ-որ մեկին դավաճանելու համար նախ պետք է սիրել, իսկ ո՞վ ասաց, թե Մոսկվան Հայաստանին սիրել է կամ սիրում է, կամ ո՞վ ասաց, որ մեծ քաղաքականության մեջ ինչ-որ մեկին սիրում են, այն էլ՝ հավերժ: Հետեւաբար, մեծ քաղաքականության մեջ դավաճաններ չկան, ու դավաճանություն չկա, որովհետեւ այնտեղ սիրողներ չկան ու սեր չկա:

Ուրեմն, բիզնեսը չի կարելի խառնել էմոցիաների հետ, որովհետեւ էմոցիաներով բիզնես չեն անում ու քաղաքականություն չեն անում:

### Վարշավայի «Հայկական պուրակը»

Նախքան Վարշավա մեկնելը, ինչպես վերը նշեցինք, Սերժ Սարգսյանը կիրակի օրով մի քանի ժամ հանդիպում ունեցավ ՌԴ անվտանգության խորհրդի քարտուղար Նիկոլայ Պատրուշեւի հետ: Վերջինս, ի դեպ, իր երեւանյան այցի ժամանակ, պատասխանելով լրագրողի հարցին՝ կապված վերոհիշյալ ռուս-ադրբեջանական զենքի առեւտրի հետ, ասել էր. «Առեւտրում գնորդի ով լինելը մեծ հաշվով կարեւոր չէ»: Միեւնույն ժամանակ, Պատրուշեւն ընդգծել էր, որ «Հայաստանում ռուսական բանակն է գտնվում»: Ո՞ւմ էր ուղղված ՌԴ-ի բարձրաստիճան իշխանության ներկայացուցիչներից մեկի հիշյալ հայտարարությունը. Վարշավա մեկնել եւ ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագիր կնքել պատրաստվող ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՞ն, հայաստանյան իշխանությա՞նն առհասարակ, թե՞ բոլոր նրանց, ովքեր իրենց դավաճանված են զգում, քանի որ Մոսկվան Բաքվին կրկին զենք է վաճառել, եւ մտավախություն ունեն, որ երբ ռուսական զենքով ադրբեջանցիները հարձակվեն Հայաստանի վրա, Հայաստանում ռուսական զենքի պակաս կլինի ու դրա կարիքը կզգացվի: Գուցե Պատրուշեւի թիրախն այս երեքն էին՝ միաժամանակ:

Մի բան է ակնհայտ, եթե ուղղված էր Սերժ Սարգսյանին հենց, այսինքն՝ հիշեցնում էր ՀՀ բարձրագույն ղեկավարությանը, թե հնարավոր չէ տնտեսական անվտանգությունը պայմանավորել այլ՝ եվրոպական արժեհամակարգով, իսկ անվտանգությունն առհասարակ՝ ռուսական գործոնի հետ կապել, ապա անգամ նման մեսիջ ստանալուց հետո Սերժ Սարգսյանն այսօր Վարշավայում է, որտեղ «Հայկական պուրակ» է բացվել: Հետեւաբար, Երեւանն՝ ի դեմս նախագահ Սարգսյանի, պարզապես չէր կարող նման արձագանք տալ Մոսկվայի մեսիջին, եթե այդ մեսիջն, իհարկե, եղել է: Բնականաբար՝ Պատրուշեւի հետ նախագահ Սարգսյանը կարող է քննարկած լինել իր «եվրոպական օրակարգը», բայց դա ամենեւին չի նշանակում, որ այդ օրակարգում կետեր կան, որոնք Մոսկվայի համար անընդունելի են, գոնե առայժմ: Հետեւաբար, Պատրուշեւն իր խոսքն ուղղել է «Ռուսաստանի կողմից դավաճանվածներին». համաձայնեք, բավականին պատկերավոր է հնչում՝ Ռուսաստանը զենք է վաճառում Ադրբեջանին, բայց «ռուսական բանակը Հայաստանում է»:

Զենքն ու էմոցիաներն ուղղակի զատել է պետք՝ հավերժ էմոցիոնալ չմնալու համար:

**Սրբագրում եւ խմբագրում**

ամեն ծավալի ու բովանդակության հայերեն տեքստերի, նաեւ մուտքագրում

(094 48-68-03)

*ՄԱՅՐԱՔԱՂԱՔ*

# Տրանսպորտազերծ «Կասկադ» օրվա որոշակի ժամերի

**Մայրաքաղաքի հասարակական հանգստի տարբեր վայրերում հետիոտների անվտանգ տեղաշարժն ապահովելու, ինչպես նաեւ զբոսանքի հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով Երեւանի քաղաքապետի Տարոն Մարգարյանի հանձնարարությամբ ուսումնասիրվել եւ առաջարկություններ են ներկայացվել որոշ փողոցների երթեւեկի ժամանակավոր դադարեցման վերաբերյալ:**

**Քաղաքապետի որոշմամբ «Կասկադ» համալիրին հարակից Թամանյան փողոցի՝ մինչեւ Իսահակյան փողոց ընկած հատվածում առավոտյան ժամը 11-ից մինչեւ երեկոյան ժամը 23-ը ավտոտրանսպորտային միջոցների երթեւեկն ու կայանումը ժամանակավորապես դադարեցված է: Տարածքն ամբողջությամբ կահավորված է ճանապարհային երթեւեկության համապատասխան նշաններով: Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը տեղեկացրել է, որ վարչության եւ ճանապարհային ոստիկանության աշխատակիցները մշտական հսկողություն են իրականացնում, եւ վարորդներին տեղեկացվում է գործող նոր կարգի մասին, սակայն հետագայում օրինախախտ վարորդները կենթարկվեն վարչական պատասխանատվության:**

**Քննարկման փուլում են Հյուսիսային պողոտայի Տերյան-Հին Երեւանցի, Մոսկովյան պուրակին հարակից Գ. Քոչարի փողոցների, ինչպես նաեւ բոլոր վարչական շրջաններում նման հնարավոր վայրերի երթեւեկության ժամանակավոր դադարեցման վերաբերյալ առաջարկությունները:**

*Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչություն*

# Մարտունու զինկոմիսարիատը չի վճարել 8 բուժաշխատողների երկու ամսվա աշխատավարձը

**Մարտունու պոլիկլինիկայի 7 բժշկի եւ մեկ բուժքույրի այս տարի էլ Մարտունու զինկոմ, փոխգնդապետ Մարտիրոս Զուռնաչյանն առաջարկել է հունվար-փետրվար ամիսներին ըստ օրենքի ընդգրկվել զինկոմիսարիատի նախազորակոչային հանձնաժողովի կազմում եւ աշխատել նորակոչիկների հետ: Մինչ աշխատանքի անցնելը կայացել է ժողով զինկոմի գլխավորությամբ: Նա հավաստիացրել է, որ երկու ամսվա կատարած աշխատանքի համար բուժաշխատողները վճարվելու են: Հունվար-փետրվար ամիսներին բուժաշխատողները կատարել են իրենց պարտականությունները, սակայն չեն վճարվել: Մի քանի ամիս շարունակ Մարտունու զինկոմը նրանց ասել է, որ պաշտպանության նախարարությունը գումար չի տրամադրում, որ կարողանան աշխատավարձը վճարել: Իսկ գումարը փոքր չէ: Բուժքույրի աշխատավարձը կազմում է 60.000 դրամ, իսկ 7 բժիշկներինը՝ 80-100.000-ական դրամ: Եթե այս գումարը բազմապատկենք 2-ով, ապա ստացվում է բավական կլորիկ գումար, որը կամ պաշտպանության նախարարությունը չի տրամադրում, կամ էլ Մարտունու զինկոմն է պահում:**

**Բուժաշխատողներն ընդամենը ցանկանում են իմանալ, թե ի՞նչն է խնդիրը, որ շուրջ 4-5 ամիս կատարած աշխատանքի դիմաց չեն վարձատրվում եւ ինչո՞ւ է պաշտպանության նախարարությունը ոտնահարում իրենց իրավունքները:**

**Հ. Հ.**

# Անդրադարձ-հերքում

**«Ազգի» նախորդ համարում շատ հակիրճ ներկայացրել էինք Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանի՝ «Արմենպրես» լրատվական գործակալությանը տված հարցազրույցի հիմնական՝ օֆշորային կազմակերպության եւ հետախուզման մեջ գտնվող գործարար Աշոտ Սուքիասյանի իբր իրեն նվիրած «Բենթլի» ավտոմեքենայի հետ կապ չունենալու վերաբերյալ հայտարարությունները: Դժբախտաբար, սակայն, երկրորդ հարցի վերաբերյալ Նավասարդ սրբազանի տված բացատրությունը ճիշտ չի ներկայացվել մեր նյութում, որից այն տպավորությունն է ստացվում, թե սրբազանը, իբր, Աշոտ Սուքիասյանից է ստացել իր ունեցած «Բենթլին»:**

**Նավասարդ սրբազանը երեկ զանգահարելով խմբագրություն զայրացած վրդովմունքով պահանջեց հերքել այդ տեղեկությունը, ինչը եւ անում ենք, միաժամանակ արտատպելով «Արմենպրեսի» հարցազրույցի այդ մասն ամբողջությամբ. «Նախ եւ առաջ, հարկ եմ համարում եւս մեկ անգամ նշել, որ տարիներ առաջ ինձ նվիրված «Բենթլի»-ով չեմ երթեւեկում՝ առավել նախընտրելով օգտվել ծառայողական ավտոմեքենայից: Առհասարակ 14 տարի ավտոմեքենա չեմ վարել, եւ այդ «Բենթլի»-ին վերաբերվում էի զուտ որպես նվեր. ավտոմեքենան չէ այն երեւույթը, որը կարող է ինձ համար արժեք ներկայացնել: Այո, Աշոտ Սուքիասյանը ժամանակին ունեցել է «Բենթլի» ավտոմեքենա, սակայն բոլորովին այլ մոդելի, որը որեւէ առնչություն չունի ինձ պատկանող ավտոմեքենայի հետ»:**

**Սրբազան հոր ներողամտությունն ենք խնդրում մեր թույլ տված թյուրիմացության համար: Սակայն չենք կարող այստեղ չարձագանքել (ի դեպ, «Ազգը» բնավ չի անդրադարձել աղմկահարույց այդ «Բենթլիի» պատմությանը), որ պետական-քաղաքական դեմքերին ու հոգեւորականներին հակացուցված է անձնական թանկարժեք նվերներ ընդունելը, ում կողմից էլ որ դրանք մատուցված կամ ընծայված լինեն: Դա խիստ փորձանավոր է:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Մեր տարածաշրջանն ամենաէներգատարն է աշխարհում

## *Կրկին Հայաստանում էներգաարդյունավետությամբ 132 մլրդ դրամ խնայելու հնարավորության մասին*

Հունիսի 25-ին Բրյուսելում Համաշխարհային բանկը ներկայացրել է Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի կլիմայական փոփոխություններին նվիրված երեք զեկույց, որոնք, այլ հարցերի թվում, անդրադառնում են էներգիայի այլընտրանքային աղբյուրների ու արդյունավետ օգտագործման հարցերին: Անդրադարձ է կատարված նաեւ այս տարածաշրջանում գտնվող Հայաստանին:

Առաջին՝ «Անցումը տնտեսական աճի էկոլոգիացման՝ կլիմայի փոփոխություններին հակազդելու պլանի տնտեսական շահերը» զեկույցում նշվում է, որ ի նպաստ տնտեսական աճի կլիմայի փոփոխություններին հակազդելու ռազմավարության հիմնական բաղադրիչներն են էներգաարդյունավետությունը, էներգիայի ավելի մաքուր աղբյուրները եւ բնական ռեսուրսների կառավարումը: Որպես օրինակ նշվում է, որ 2012-ին երաշտի պատճառով Ղազախստանում ոչնչացավ բերքի 50 տոկոսը, Ռուսաստանում՝ 25 տոկոսը, Ուկրաինայում՝ 20 տոկոսը: Նման կլիմայական փոփոխությունները չեն բացառվում, որ ապագայում եւս կկրկնվեն: Նշվում է, որ Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի երկրների արձագանքն այս երեւույթներին շատ դանդաղ է: Ըստ զեկույցի, այս տարածաշրջանը ամենաէներգատարն է աշխարհում: Մասնավորապես, մեկ միավոր թողարկվող արտադրանքի էներգածախսերը 50 տոկոսով գերազանցում են համաշխարհային միջին ծախսերը:

Մյուս զեկույցում «Էներգաարդյունավետություն՝ հաջողված օրինակներից քաղած դասերը» վերլուծվում են Եվրոպական միության այնպիսի երկրների, ինչպիսիք են Դանիայի, Գերմանիայի, Իռլանդիայի եւ Շվեդիայի ռազմավարությունները արեւմուտքում եւ Լիտվայինը, Լեհաստանինն ու Ռումինիայինը՝ Կենտրոնական Եվրոպայում: Այդ երկրներում հաջողվել է առավելագույնս բարձրացնել էներգաարդյունավետության մակարդակը: Սակայն տարբեր երկրներում իրավիճակը տարբեր է: Առավել հաջողված երկրներն այստեղ Դանիան ու Իռլանդիան են, իսկ, օրինակ, Ռուսաստանում, Ուկրաինայում եւ Կենտրոնական Ասիայի մյուս երկրներում այդ ցուցանիշն ամենացածրն է աշխարհում: Համաշխարհային բանկի փորձագետները կապ են տեսնում էներգաարդյունավետության մեջ կատարված ներդրումների եւ կայուն տնտեսական աճի միջեւ, նշելով, որ դա առավել նկատելի է Գերմանիայում եւ Շվեդիայում:

Երրորդ զեկույցում՝ «Հավասարակշռության ապահովումը՝ էներգետիկ սուբսիդիաների կրճատումը հասանելիության պահպանման պարագայում», նշվում է, որ էներգիայի սակագների սուբսիդավորման վերացումը կարող է զուգակցվել բարեկեցության բարձրացման հետ: Այսինքն, պարտադիր չէ, որ այդ քայլը բերի աղքատության ավելացման եւ կյանքի պայմանների վատթարացման: ՀԲ զեկույցի գնահատմամբ, էներգակիրների գների բարձրացման դեպքում, առավել աղքատ տնային տնտեսություններին փոխհատուցման տրամադրումը էներգաարդյունավետության բարձրացման մեջ փոքր ներդրումներով զուգակցելով, հնարավոր կլինի ապահովել համախառն ներքին արդյունքի 1 տոկոս աճ տարածաշրջանի երկրների կեսի համար:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա նշվում է, որ մեր երկրի էներգետիկ կարիքների մոտ 90 տոկոսը բավարարվում է ներմուծվող հումքի միջոցով: Վերստին հիշատակվում է, որ էներգաարդյունավետության մեջ ներդրումներ կատարելու միջոցով տարեկան հնարավոր կլինի խնայել 132 մլրդ դրամ կամ 360 մլն դոլար, որը երկրի համախառն ներքին արդյունքի 4,3 տոկոսն է կազմել 2009-ին: Այս մասին մենք նախկինում գրել ենք («132 մլրդ դրամ կարող ենք խնայել միայն էներգախնայողությամբ», «Ազգ», 4 հունիսի, 2013 թ): ՀԲ-ն տեղեկացնում է, որ վերականգնվող եւ այլընտրանքային էներգիայի հիմնադրամը որոշակի ծրագրեր է իրականացնում այս ուղղությամբ: Մասնավորապես, հիմնադրամը տարեկան 2-3 մլն դոլարի ներդրումներ է կատարում այստեղ:

Ամեն դեպքում, ակնհայտ է, որ էներգախնայողության միջոցով էներգաարդյունավետության ծրագրերի իրականացումը Հայաստանում գազի եւ էլեկտրաէներգիայի սակագների բարձրացման պարագայում առավել հրատապ է դարձել: Եվ ամենեւին էլ պարտադիր չէ, որ դրա անհրաժեշտության մասին խոսեն ՀԲ փորձագետները կամ նշվի զեկույցներում: Էներգախնայողության ծրագրերի իրականացումը հնարավոր է ավելի արագ եւ համեմատաբար ավելի քիչ ներդրումներով իրագործել, իսկ դրան զուգահեռ՝ նախադրյալներ ստեղծել այլընտրանքային էներգիայի զարգացման համար:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Սեյրան Օհանյան. «Իրավիճակը վերահսկելի է»

*1-ին էջից*

Այս թափանցիկությունը բերում է նրան, որ յուրաքանչյուր մատակարարում, հավասարակշռության խախտում վերահսկվի ռազմավարական գործընկերոջ համար, որը որոշակի պարտադրանքի տակ է դնում տարածաշրջանային երկրներին, որպեսզի այդ միջոցները չօգտագործվեն: Ուզում եմ ասել, որ ՌԴ-ի հետ գտնվում ենք սերտ հարաբերությունների մեջ՝ ռազմատեխնիկական զարգացման ուղղությամբ: Երեկ մի շատ կարեւոր փաստաթուղթ ստորագրեցինք, որը հնարավորություն է տալու, որ մեր ռազմական հարաբերությունները միջպետական ավելի բարձր մակարդակի վրա դրվեն՝ հնարավորություն տալով մեր եւ Ռուսաստանի ռազմական արդյունաբերության ձեռնարկություններին կնքելու անմիջական պայմանագրեր: Այնպես որ, իրավիճակը վերահսկելի է, իսկ ինչ վերաբերում է սպառազինության մրցավազքին, ապա բազմիցս խոսել ենք այն մասին, որ Ադրբեջանի ղեկավարությունը փորձում է իր քայլերով մեզ ներքաշել սրա մեջ, բայց մենք կուրորեն չենք հետեւում մրցավազքին, այլ շեշտը դնում ենք որակի վրա», ասաց նախարար Օհանյանը: Նախարարը նկատի ունի երկու օր առաջ ՀՀ մի շարք գերատեսչությունների ղեկավարների եւ ՌԴ ԱԱԽ քարտուղար Նիկոլայ Պատրուշեւի գլխավորած պատվիրակության անդամների միջեւ անվտանգության ոլորտում ստորագրված հինգ պայմանագրերն ու համաձայնագրերը: Պատրուշեւի բնորոշմամբ հայ-ռուսական հարաբերությունները առաջին հերթին ամենաբարձր մակարդակի վրա գտնվող ռազմավարական հարաբերություններ են: Հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցության համատեքստում անդրադառնալով նաեւ ռուսական զենքի վաճառքին Ադրբեջանին, Պատրուշեւն ասաց, որ զենք վաճառելիս Ռուսաստանը պահպանել է բոլոր միջազգային պարտավորություններն ու պահանջները: Նշենք, որ վերջին 10 տարվա ընթացքում Ադրբեջանը զգալի քայլեր է ձեռնարկել հատկապես ռազմական ավիապարկը ամրապնդելու ուղղությամբ: ԱՊԱ գործակալությունը ՄԱԿ-ի սովորական սպառազինությունների ռեգիստրի տեղեկատվության հիման վրա ուսումնասիրություն է անցկացրել եւ պարզել, որ վերջին 10 տարվա ընթացքում Բաքուն իր ավիապարկը համալրել է նոր մարտական ինքնաթիռներով, ուղղաթիռներով եւ անօդաչու սարքերով: Ադրբեջանը տարբեր երկրներից գնել է 47 մարտական ինքնաթիռ, 109 ուղղաթիռ, 3 անօդաչու սարք: Երեկ այս եւ այլ ռազմական տեխնիկա ներկայացվել են Բաքվում կայացած ռազմական շքերթի ժամանակ: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն էլ հայտարարել է, որ պատերազմը չի ավարտվել, ավարտվել է դրա առաջին փուլը: Ադրբեջանի սուլթանը մանրամասն ներկայացրել է, թե որքան գումար է ծախսվում սպառազինության համար՝ անընդհատ կրկնելով, որ իրենք ի վիճակի են ղարաբաղյան հարցը լուծել նաեւ ռազմական ճանապարհով, սակայն տարածաշրջանի կայունությունը չխաթարելու համար առայժմ նախընտրում են խնդրի կարգավորման բանակցային ուղին: Ալիեւյան ռազմատենչ հայտարարություններին ի պատասխան ՊՆ մամուլի խոսնակ **Արծրուն Հովհաննիսյանը** պատասխանել է նախարար Օհանյանի խոսքերով: «Չի լինում այնպես, որ Ադրբեջանի բանակը Բաքվում՝ շքերթի ժամանակ շատ հզոր լինի, իսկ առաջնագծում չկարողանա հայկական կողմին թելադրել»:

ԳՐԱՎԻՉ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

# Ռոբոտիկայի ժամանակակից լաբորատորիա «Այբ» ավագ դպրոցում՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի աջակցությամբ

**Հուլիսի 26-ին «Այբ» ավագ դպրոցում կայացել է ռոբոտիկայի լաբորատորիայի բացման հանդիսավոր արարողությունը:**

**Լաբորատորիայի բացմանը մասնակցել են «Այբ» դպրոցի ղեկավարությունը, ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, ռոբոտիկայի թիմը՝ ուսուցիչ Վազգեն Գաբրիելյանի գլխավորությամբ եւ ռոբոտիկա առարկան ուսումնասիրող աշակերտները: Լաբորատորիան ստեղծվել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի հովանավորությամբ: Այդ նպատակով ընկերությունը հատկացրել է ավելի քան 14 միլիոն դրամ:**

**Հաշվի առնելով տեխնիկական գիտությունների ոլորտում հայերի հիմնարար գիտելիքներն ու ընդունակությունները եւ առաջնորդվելով Հայաստանում բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսություն զարգացնելու տեսլականով՝ՎիվաՍել-ՄՏՍ-ն հետեւողականորեն աջակցում է Հայաստանում բարձր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ ռոբոտիկայի զարգացման աշխատանքներին: Ընկերությունը համոզված է, որ կայուն ապագայի հիմքը զարգացած կրթական համակարգն է եւ, երիտասարդության շրջանում ռոբոտիկայի նկատմամբ հետաքրքրությունը, առաջին հերթին, պետք է սերմանել դպրոցական տարիքից:**

**«Մենք ունենք հզոր մտավոր ներուժ՝ ի դեմս ավագ սերնդի մեր գիտնականների, ինժեներների եւ, առաջին հերթին՝մեր խոստումնալից երեխաների, քանի որ նրանք են մեր երկրի ապագան կերտողները: Ինչպիսի երիտասարդներ ունենք այսօր՝ այդպիսին կլինի մեր ապագան: Հետեւաբար, Հայաստանի ապագա տնտեսության ամուր հիմքերը պետք է գցել այսօր՝ մեծացնելով մտածող, ստեղծագործող, ուժեղ, պատվախնդիր եւ հայրենասեր սերունդ»,- նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**Արդեն մի քանի տարի «Այբ» կրթական հիմնադրամը տարբեր առարկաներից արդիական ուսումնական լաբորատորիաներ է ստեղծում Երեւանի եւ մարզերի դպրոցներում: «Այբ»-ը ոչ միայն նախագծում եւ հիմնում է առարկայական մոդելային լաբորատորիաներ, այլեւ մշակում է դասավանդման մեթոդաբանությունը:**

**Ֆիզիկայի եւ քիմիայի առաջին «ԱյբԼաբ»-երը գործարկվել են Երեւանի Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցում: Այնուհետ ինֆորմատիկայի «ԱյբԼաբ» է բացվել Բերդ քաղաքում: Տարածաշրջանում նմանը չունեցող էկոլոգիայի երկու «ԱյբԼաբ»-եր են ստեղծվել Քաջարանի երկու դպրոցներում, ֆիզիկայի, քիմիայի ու կենսաբանության«ԱյբԼաբ»-եր՝ Վաղարշապատի թիվ 4 դպրոցում: Ընթացքի մեջ են նոր «ԱյբԼաբ»-երի նախագծումն ու շահագործումը մայրաքաղաքի եւ մարզերի այլ դպրոցներում:**



**Ուսումնական արդիական լաբորատորիաները նախագծվում եւ ստեղծվում են «Այբ» կրթական հիմնադրամի կողմից: Այստեղ հաշվի են առնվում արդի սարքավորումներով դպրոցական լաբորատորիաներ ստեղծելու անհրաժեշտ պահանջները, տարածքի ընտրությունը, կահավորումը, ինչպես նաեւ վերապատրաստման, անվտանգության եւ կառավարման համակարգերը: «ԱյբԼաբ» ցանցն ապահովում է փորձի փոխանակում, ռեսուրսների համատեղօգտագործում (գրադարան, սիմուլյացիոնծրագրեր, տեսադարան), կառավարման ընդհանուր տեխնոլոգիաների կիրառում, համատեղ գնումներ, եւայլն:**

**«ԱյբԼաբ»-երը հաշվի են առնում տեղական եւ միջազգային փորձը, համապատասխանում են վերջին տեխնոլոգիական պահանջներին, բավարարում են անվտանգության եւ էրգոնոմիկայի չափանիշներին, տալիս են իրական եւ վիրտուալ փորձեր անցկացնելու հնարավորություն, ապահովում են ոչ միայն դպրոցական, այլեւ խորացված ծրագրերով ուսուցման իրականացում, ինչպես նաեւ նպաստում են ուսումնական գործընթացը հետաքրքրական եւ գրավիչ դարձնելուն:**

# «Հայաստան» հիմնադրամը շարունակում է աջակցել սիրիահայերին

**Սիրիահայության աջակցության ծրագրի համաձայն «Հայաստան» համահայկական հիմնադրամը շարունակում է աջակցել մեր հայրենակիցներին:**

**«Հայաստան» հիմնադրամից տեղեկացանք, որ իրականացվել են ծրագրեր առողջապահության, կրթության եւ սոցիալական ոլորտներում: 2013թ. հունիսի դրությամբ 100.000 եվրո (Ֆրանսիայի տեղական մարմին), 12.000 եվրո (Գերմանիայի տեղական մարմին), 100.000 դոլար (Լիբանանի տեղական մարմին) ուղղվել են Սիրիայում բնակվող մեր հայրենակիցների տարբեր կարիքներին. գումարի զգալի մասը հատկացվել է Հալեպի հայկական վարժարանների ուսուցիչներին որպես աշխատավարձ: Իսկ Բրազիլիայի, Արգենտինայի, Շվեդիայի տեղական մարմինների հանգանակած գումարներով հիմնադրամը փոխհատուցել է 110 սիրիահայ ուսանողների ուսման վարձը եւ հոգացել սիրիահայերի այլ ծախսեր: ԱՄՆ Արեւմտյան ափի տեղական մարմնի հավաքագրած 10.000 դոլարով նյութական օժանդակություն է ցուցաբերվել Երեւանի Կիլիկյան դպրոցին, որտեղ սովորում են Հայաստան տեղափոխված սիրիահայ երեխաները: Հիշեցնենք, որ գործարարներ Հրայր Հովնանյանի եւ Արա Աբրահամյանի նվիրաբերած միջոցներով հիմնադրամը նաեւ ֆինանսավորել էր Հալեպ-Երեւան-Հալեպ չվերթերը:**

# Եզրաս Անվեհերը



Մայր տաճարը

Եթե հավատանք պաշտոնական տվյալներին, Մոսկվայում ապրող հայերի թիվը 160 հազար է: Սակայն ենթադրվում է, որ Ռուսաստանի մայրաքաղաքում սփռված են 500 հազարից մինչեւ 1 մլն հայեր: Այլ կերպ ասած, Հայաստանից դուրս դա թվաքանակով ամենամեծ համայնքն է: Ռուսիո եւ Նոր Նախիջեւանի թեմերի առաջնորդ Եզրաս սրբազանը գործում է զգուշավորությամբ եւ զբաղվում շինարարությամբ: Անկախ ազգությունից եւ կրոնական համոզմունքից` այցելուն ապշահար է լինում սրբատաշ քարից կառուցված հայկական վեհաշուք Մայր տաճարի տեսքից, որը գտնվում է ավելի համեստ չափեր ունեցող մեկ ուրիշ նորակառույց եկեղեցու կողքին: Նախատեսված ժամադրությանը փոքր-ինչ շուտ ներկայանալով` հասցնում եմ գնահատել ավարտին մոտեցող շինարարական աշխատանքների ծավալը: Հանկարծ բակում արգելակում է մթնեցված ապակիներով մի «Ֆոլկսվագեն»: Երկու մորուքավոր անձինք աճապարանքով մոտենում են մեքենայի հետեւի դռնակին, որտեղից դուրս է գալիս խնամված ճերմակող մորուքով, սեւ ակնոցով մի մարդ: Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը սիրալիր ողջունում է ինձ: Տպավորված եմ եղբոր` Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հետ իր արտաքին նմանությունից: Նրա հայացքը զննում է հորիզոնը. նոր տաճարը հայ ժողովրդի պատմության վկայությունն է քարի դրվագազարդ մոտիվներով, բայց կա նաեւ սրբավայրում գտնվող շենք: Եզրաս սրբազանը ողջունում է բանվորներին եւ ավագ վարպետի պես ձեռքի շարժումով մեկնաբանում աշխատանքների առաջընթացի վիճակը, մինչ իր «մոնթերը», որոնք երկուսն էլ քահանաներ են, լռելյայն գլխով են անում:

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդ Եզրաս սրբազանը իշխանություն ունի ԱՊՀ համայնքների վրա, որոնք տարածվում են Վլադիվոստոկից մինչեւ Կալինինգրադ, միջինասիական հանրապետություններից մինչեւ բալթյան պետություններ: Նա համաձայնում է ինձ հարցազրույց տալ իր ժամանակավոր նստավայրում:

Մոսկվայի հայկական գերեզմանատանը Լազարյանների (1815 թ. հանրահայտ Լազարյան ճեմարանը հիմնած գերդաստանի) տոհմական դամբարանի վրա գտնվող Սուրբ Հարություն փոքրիկ մատուռը այլեւս բավարար չէր հավատացյալների բազմությանը ընդունելու համար: «Ես պետք է երախտապարտ լինեմ Ռուսաստանի իշխանություններին, որոնք քաղաքի հենց կենտրոնում մեզ նվիրեցին 1,6 հեկտար մակերեսով հողատարածք: Այդուհանդերձ մի քանի տարի պահանջվեց, որպեսզի մենք վերջնական թույլտվություն ստանանք աշխատանքներ սկսելու համար», ասում է նա: Սա բարեպաշտություն է մի քաղաքում, որտեղ անշարժ գույքի գները համաշխարհային ռեկորդներ են սահմանում: «Տաճարի եւ շրջակա համալիրի շինարարության ծախսերը 100 տոկոսով ծածկվեցին հայերի, ինչպես նաեւ ռուսների նվիրատվություններով, եւ մենք ստիպված չեղանք ֆոնդերի օգտագործման արշավ ձեռնարկել», շարունակում է Եզրաս սրբազանը: Նա կարող է պարծենալ, որ Հայաստանից դուրս եւ ռեկորդային կարճ ժամանակամիջոցում ստեղծված խոշորագույն եկեղեցական կառույցի ղեկավարն է:

Վիթխարի կրոնամշակութային համալիրի Մայր տաճարը դեռ անուն չունի: «Համաձայն կաթողիկոսի կամքի, տաճարը կանվանակոչվի իր բացման օրը: Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն համալիրն առաջին անգամ տեսնելուց հետո խորապես ազդված էր: Պատկերացնո՞ւմ եք, տաճարը 58 մետր բարձրություն ունի, եւ Քրիստոսի կյանքի կարեւոր փուլերը վերարտադրող որմնանկարները տարածվում են 800 քառակուսի մետրի վրա: Քարերը պատմում են մեր պատմությունը: Տեսե՛ք, այստեղ Ավարայրի ճակատամարտն է եւ Ներսես Շնորհալին: Իսկ այնտեղ Սուրբ Հռիփսիմեի նահատակությունն է», ասում է սրբազանը` մատով ցույց տալով դրվագազարդված մոտիվները: Ամեն ինչ վեհատեսիլ ու վսեմ է այս տարածքում, որի նույնիսկ տուֆ քարերն են Հայաստանից գնացքով բերված: Նույնը վերաբերում է 13 մետր բարձրությունից մեր վրա թեքված խաչքարին. ասում են` աշխարհում ամենամեծն է:

Ինչ վերաբերում է շենքերի համալիրին, այն տարածվում է հինգ մակարդակով եւ ունի 25 հազար քառակուսի մետր մակերես. կայանատեղից բացի` կան 100 քառ. մետրանոց խոհանոց, 620 քառ. մետրանոց բազմանպատակ մեծ դահլիճ, բարձրաստիճան հոգեւորականների նստավայր` կաթողիկոսական հարկաբաժնով, ինչպես նաեւ Մոսկվայի հայերի պատմության թանգարան, որը նախատեսված է ռուսաստանյան հասարակայնության համար: «Ռուսաստանցիները պետք է իմանան, որ մենք այստեղ ներկա ենք վաղուց: Ո՞վ է հիշում, որ Մոսկվայում առաջին հայկական եկեղեցին կառուցվել է 1666 թվականին պարսկահայ վաճառականների միջոցներով: Մի՛ մոռացեք, որ հայ առաքելական առաջին թեմը ստեղծվել է 1714-ին Աստրախան քաղաքում», ասում է սրբազանը: Երբեմնի այդ ամբողջ շքեղությունից մնացել է միայն դժգույն արտացոլանք. դրա վկայությունը Մոսկվայի հայկական գերեզմանատանը, Լազարյանների տոհմական դամբարանում կառուցված Սուրբ Հարություն եկեղեցին է, որը ժամանակավոր հայրապետական նստավայրի դեր է կատարում:



Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյան

Եզրաս սրբազանը մտադիր է, մշակութային կենտրոնից բացի, բացել 250 աշակերտի համար նախատեսված հայկական վարժարան: Սա բարի լուր է համայնքի համար, որի դպրոցական կառույցները ի վիճակի չեն ամեն օր ընդունելու նշանակալի թվով հայ աշակերտների: «Ամեն ինչ ավարտուն տեսք կստանա մինչեւ առաջիկա աշուն: Ինձ մնում է միայն տնօրեն գտնել», ժպտում է սրբազանը:

Ռուսաստանում կոմունիզմի 70 տարիներին մի շարք սրբավայրեր կորցրած Հայ առաքելական եկեղեցին հետխորհրդային շրջան թեւակոխեց բնավ ոչ փայլուն վիճակում: «Եթե ճիշտ է, որ մեր ժողովուրդը քրիստոնեությունից կտրված է անտեղյակության պատճառով, այդուհանդերձ նա շարունակում է գիտակցել սեփական արմատներն ու ժառանգությունը», հավաստում է հոգեւորականը եւ շարունակում. «Ուզենք թե չուզենք, մենք սփյուռքի վիճակում ենք. ինչպես սովորաբար ասում են, սա «ներքին սփյուռք» է»: Ոչ առանց հպարտության նա հիշեցնում է հայկական կրթական կենտրոնի` Հայորդյաց տան գոյության մասին, որի 700 սաները ստանում են ամբողջական հայկական կրթություն (երգի ու պարի դասընթացներ, թատերախումբ եւ այլն):



Մշակութային կենտրոնը

«2001-ից` իմ պաշտոնավարության սկզբից մինչեւ օրս մենք Ռուսաստանի զանազան մասերում կարողացել ենք կառուցել 16 եկեղեցի, իսկ քահանաների թիվը եռապատկվել է. ներկայումս նրանք 28-ն են», գոհունակությամբ ասում է Եզրաս սրբազանը: Նրա խոսքերով` Ռուսաստանն ազատությունների երկիր է. կարող ես կառուցել ուզածդ քանակությամբ դպրոց ու եկեղեցի: Երկրի մոտ հարյուր ազգություններն ու դավանանքները հաշտ ու խաղաղ գոյակցում են: Սրբազանը Ռուսաստանի Կրոնների եւ ազգությունների բարձրագույն խորհրդի անդամ է եւ այդ կարգավիճակում տարեկան 4-5 անգամ հանդիպում է ՌԴ նախագահ Պուտինի հետ, մասնակցում Ռուսաստանի կրոնների եւ ազգությունների հարցերի քննարկումներին:

Մի պահ լռություն է տիրում: Եզրաս սրբազանը հերթական անգամ հայացքը սեւեռում է տաճարին: «Թեկուզ աշխարհի ամբողջ ոսկին ունենալով` այս ամբողջը չէինք կարողանա իրականացնել առանց Տիրոջ կամքի: Սրա համար անհրաժեշտ է մեր քրիստոնեական եւ ազգային ժառանգության, մեր արժեքների գիտակցումը», ասում է նա` սկսելով մի երկարահունչ բարոյախոսություն: Մեր շուրջը մի քանի հետաքրքրասերներ ուշադրությամբ ականջ են դնում: Սրբազանը հմայում է իր խոսքով եւ հայացքով: Ասես պատահական մարդկանց առջեւ վարժանք անելիս լինի ինչ-որ պաշտոնական ելույթ սկսելուց առաջ:

Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի եղբայրն է: Ծնվել է 1959-ին Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում: Քահանա է ձեռնադրվել 1985-ին: 1988-ին աշխատանքի է անցել Սանկտ Պետերբուրգում, որի աստվածաբանական ուղղափառ ճեմարանն ավարտելուց հետո` 2001-ին ձեռամբ կաթողիկոս Գարեգին Բ-ի նշանակվել է Ռուսիո եւ Նոր Նախիջեւանի առաքելական թեմերի առաջնորդ, ինչպես նաեւ պատվիրակ Մոսկվայի ու Ռուսիո ուղղափառ եկեղեցու պատրիարքարանում: Նույն թվականին պաշտպանել է Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի պատմությանը նվիրված դոկտորական թեզը:

**ՏԻԳՐԱՆ ԵԿԱՎՅԱՆ**

**«France-Arménie», juin 2013**

**Ֆրանս. թարգմ. Պ. Ք.**

Նախորդ համարում, անդրադառնալով Ստամբուլի Թաքսիմ հրապարակի «Գեզի» զբոսայգու անվան հետ կապված դեպքերի պատճառած ոգեւորությանը թուրքահայ որոշ շրջանակներին, նշել էինք, որ դրանց հիմքում իսլամականներից ռեւանշ վերցնելու քեմալական ազգայնամոլության ձգտումն է, վերջիններս հավասարապես հայատյաց են եւ այդ ոգեւորությունը ընդամենը համայնքի դեմ կգործի ինչպես ցուցարարներին, այնպես էլ իշխանություններին:

դեմ: Հայերին, հույներին, հրեաներին վիրավորելու համար թուրք ըմբշամարտիկին դատապարտելիս «Սթարը» դատապարտում է նաեւ «Հյուրիեթին» քննադատելու համար կառավարությանը եւ ժողովրդավարության ջղաձգումներով նույնացնում այս երկուսին: Ինչ վերաբերում է «Հյուրիեթին», ապա այս թերթը որքան էլ ըմբշամարտիկի հետ դատապարտի նաեւ վարչապետ Էրդողանի կառավարությանը Հայոց ցեղասպանության ճանաչման

եւ այնտեղ Մեծ եղեռնի առաջին հուշարձանը վերականգնելու առաջարկին, որը հունիսի 22-ին արել էր Ֆրանկֆուրտում գործող «Միություն ընդդեմ ցեղասպանության» կազմակերպությունը, ապա դա էլ պետք է համարվի վտանգավոր թուրքահայերի համար, հատկապես Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի շեմին, երբ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը զգալի սպառել է թուրքական ժխտողականության դիրքերը:

# «Գեզիի» դիմադրությունը ռեւանշի միջոց է դարձել

### *Դա իրավազուրկ ժողովուրդներին ոչ թե ազատություն կբերի, այլ միայն աղետ*

Գրգռելու պարագայում անկասկած թուրքահայությունը վերստին թիրախ կդառնա հայատյացությամբ տառապող թուրք հրոսակի համար: Որպես օրինակ բերել էինք Ստամբուլի համալսարանի պրոֆ. Ահմեդ Ալանի եւ ըմբշամարտիկ, օլիմպիական բրոնզե մեդալակիր Ռիզա Քայաալփի սանձարձակությունն ու հայհոյանքը:

«Հյուրիեթը» դատապարտել է պրոֆեսորին, իսկ «Սթարը»՝ ըմբշամարտիկին: Հատկանշական է, որ այս դատապարտումներն անգամ նկրտում ունեն՝ ինչպե՞ս: Մինչ հարցին պատասխանելը ներկայացնենք «Սթարի» գրածը. «Հավաքականի մարզիկ Քայաալփին քննադատողներն իրավացի են: Այս ըմբշամարտիկը անշնորհքություն է դրսեւորել: Ավելին, գործել է հանցանք, որի անունը ատելության սերմանում է: Ընդ որում, այն իշխանության օրոք, որը համայնքներին է վերադարձնում Իսմեթ փաշայի առգրավված կալվածքները: Ցավոք, երկրում հայ, հույն եւ հրեա էթնիկները անարգանքի իմաստ են ունեցել: Որոշ տգետներ հայ ասելիս Հայաստան էին հասկանում, հույն՝ Հունաստան, հրեա՝ Իսրայել: Քեմալ Աթաթուրքի հիմնադրած մեր ազգային պետությունն էլ այս երկրներին պաշտոնապես «թշնամի» հռչակեց: Հետեւաբար մեր հայ, հույն, հրեա քաղաքացիները համարվեցին թշնամի, այսինքն՝ դավաճան: Ըմբշամարտիկը անցյալից եկող սովորությամբ վիրավորել է մեր ոչ մահմեդական քաղաքացիներին:

Նրան դատապարտելու հարցում համամիտ ենք բոլորս: Քայաալփը Միջերկրականի օլիմպիական խաղերի բացմանը կրել էր ազգային հավաքականի դրոշը, որին իրավացիորեն հակազդեց «Հյուրիեթը»: Սակայն միաժամանակ նշեց, որ նա դրոշ կրելու պատվին է արժանացել իր հայհոյանքների համար: Կնշանակի նպատակը արարքի համար ըմբշամարտիկին դատապարտելը չէ, այլ երկրի վարչապետին անկյուն խցկելն ու կառավարությանը հեղինակազրկելը»:

Այլատյացությունը հանցագործություն է մարդկության հան- ամեն մի նախաձեռնության դեպքում թուքումուր է թափել հայերի գլխին ինչպես եւ «Սթարը», ոչ պակաս այլանդակ հայհոյանքներով, քան ըմբշամարտիկը վիրավորել հայությանը եւ տասնյակ տարիներ հայատյացության քարոզով թուրք հրոսակի ագրեսիվ նկրտումներն ուղղել է թուրքահայության դեմ:

Այդ առումով պատահական չէ հիմնադրման օրից «Հյուրիեթի» լոգոյի տակ տեղ գտած քեմալական ազգայնականության «Թուրքիան թուրքերինն է» կարգախոսը: Եթե «Գեզիի» այսպես կոչված դիմադրության շարժումը հանգեցնի Էրդողանի կառավարության տապալմանը, ապա հայերին, հույներին, ասորիներին թիրախ են դարձնելու այն ուժերը, որոնք համաժողովրդական տեսք տալու համար վերջիններիս ընդգրկել են այսպես կոչված դիմադրության շարժման մեջ:

Այլ կերպ, թուրք իրականության խնդիրը այլատյացության դատապարտումը չէ, այլ թուրքական զանգվածների ագրեսիվ նկրտումները ազգային փոքրամասնությունների, էթնիկ եւ կրոնական խմբավորումների դեմ ուղղորդելը, որն իբրեւ առաջադրանք Թուրքիայում ստանձնել են իշխանությունները, ընդդիմությունը, ազգայնականները, իսլամական, քեմալական թե «գորշ գայլերի» եւ գրեթե կենտրոնական բոլոր թերթերը՝ անկախ ուղղվածությունից:

Ուստի միանգամայն ավելորդ է «Գեզիի» դեպքերով ոգեւորվելը, ինչճպես թուրքահայ որոշ շրջանակների հետ հունիսի 22-ի հաղորդագրությամբ ոգեւորվել էր Գերմանիայի եւ միջին Եվրոպայի ասորիների ֆեդերացիան «Ամեն տեղ Թաքսիմ է, ամենուր դիմադրություն» կարգախոսով, թե այս դեպքերը Թուրքիայի ժողովուրդների ազատության պայքարն են: Եթե նույնիսկ պայքար լինեն, այդ պայքարում հայերը, հույներն ու ասորիները կշիռ չեն ունենա, որովհետեւ 76-միլիոնանոց Թուրքիայում հայերը 60-65 հազար են, ասորիները՝ 15-20, իսկ հույները մինչեւ 2,5 հազար:

Գալով «Գեզին» հանգուցյալ Հրանտ Դինքի անունով կոչելու,

Ի դեպ, վարչապետ Էրդողանի իսլամամետ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության ավելի քան 10 տարվա վաղեմություն ունեցող միանձնյա իշխանությունն էլ երկրում հանգեցրել է քեմալականների քաղաքական կազմակերպության Ժողովրդահանրապետական կուսակցության դիրքերի սպառմանը: Մինչ դիրքերի սպառման պատճառով հավասարակշռությունից դուրս է գալիս քեմալական ազգայնականությունը եւ Թուրքիայում շրջանառության մեջ են դրվում «Գեզիի» ցույցերը, Էրդողանի կառավարությանն էլ կշռադատությունից զրկում է ցուցարարների միջոցով քեմալական ազգայնամտությանը ցուցադրվող միջազգային աջակցությունը:

Աջակցության վերջին օրինակը թերեւս անգլիական «Էկոնոմիստն» է: Հունիսի 22-ի համարում վարչապետ Էրդողանի ժողովրդավարության ըմբռնումը որպես «զոմբիացված ժողովրդավարություն» բնութագրող այս թերթը, ելնելով «Գեզիի» դեպքերից, «Սուլթա՞ն, թե՞ դեմոկրատ» վերնագրով Թուրքիայի վարչապետին նույնացրել էր ենիչերիների հաշվեհարդարի զոհը դարձած Սելիմ 3-րդի հետ, իսկ 2011-ի հունիսի 12-ի խորհրդարանական ընտրություններում Ժողովրդահանրապետական կուսակցության օգտին քվեարկելու կոչ էր արել թուրք ընտրողներին, գիտենալով, որ այս կուսակցությունը քեմալական ազգայնականության քաղաքական կազմակերպությունն է:

Եթե որեւէ դիմադրություն ռեւանշի միջոց է դառնում եւ դրան խառնվում են միջազգային ուժերը, աջակցելով կողմերից մեկին, ապա դա իրավազուրկ ժողովուրդներին ոչ թե ազատություն, այլ աղետ կբերի միայն: Հատկապես Թուրքիայի պես երկրում, որտեղ այլատյացությունը ի սկզբանե եղել է իշխանության, ընդդիմության եւ բնակչության առանձնահատկությունը: Կարծում ենք այս փաստը անձնական փորձությունից պետք է հայտնի լինի գոնե հայերին, հույներին եւ ասորիներին:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Էլիզաբեթ Բ թագուհու մրցանակ՝ համացանցի հիմնադիրներին

Մեծ Բրիտանիայի Էլիզաբեթ Բ թագուհին ընդունելություն է կազմակերպել գիտատեխնիկական նվաճումների մրցանակի ստեղծման առիթով: Թագուհու անունը կրող մրցանակը կոչվում է Queen Elizabeth Prize for Engineering: Պարգեւավճարի չափը 1 մլն ֆունտ է (ավելի քան 1,5 մլն դոլար): BBC-ն նշում է, որ մրցանակը հանձնվում է առաջընթացին նպաստող ճարտարագիտական նորամուծությունների համար:

Առաջին մրցանակակիրները դարձել են համացանցի ստեղծման մասնակիցները՝ բրիտանացի Թիմ Բեռներս-Լին եւ ամերիկացիներ Ռոբերտ Կանը, Վինտ Սերֆը եւ Մարկ Անդրեեսսենը: Մրցանակի հանձնման արարողությունը տեղի է ունեցել Բուքինգհեմյան պալատում:

Պ. Ք.

TEMPORA

# Բեռլինը Լոնդոնից պարզաբանում պահանջեց լրտեսման առնչությամբ



**Գերմանիայի կառավարությունը Լոնդոնին պաշտոնական հարցապնդում է ուղարկել էլեկտրոնային փոստի եւ հեռախոսազրույցների լրտեսման բրիտանական ծրագրի կապակցությամբ, որն օրերս հայտնի էր դարձել լրատվամիջոցներին: Բեռլինի իշխանություններին մասնավորապես հետաքրքրում է, թե Գերմանիայի քաղաքացիներն արդյոք դարձե՞լ են լրտեսման օբյեկտներ:**

**«Գարդիան» թերթը գրում է, որ Մեծ Բրիտանիայի արդարադատության եւ ներքին գործերի նախարարությանը Գերմանիայի արդարադատության նախարար Սաբինա Լոյտհոյսեր-Շնարենբերգերի հղած նամակում հարցապնդում է արվում, թե լրտեսման ծրագիրն արդյոք իրականացվել է դատարանի՞ թույլտվությամբ եւ ունի՞ արդյոք օրենսդրական հիմք: Բացի դրանից, գերմանացի նախարարին հետաքրքրում է՝ ծրագիրն օգտագործվում է կոնկրետ տեղեկություններ ստանալո՞ւ համար, թե՞ ավելի լայն ընդգրկում ունի:**

**«Գերմանիայի ձայն» ռադիոկայանի տվյալներով, ավելի վաղ՝ հունիսի 24-ին, Գերմանիայի կառավարությունը պարզաբանումների համար դիմել էր Բեռլինում Մեծ Բրիտանիայի դեսպանությանը:**

**Առաջին անգամը չէ, որ գերմանացի իշխանավորները քննադատում են բրիտանական հատուկ ծառայությունների Tempora ծրագիրը: Դրա կապակցությամբ ավելի վաղ հիասթափություն էր արտահայտել կանցլեր Անգելա Մերկելը, իսկ արդարադատության նախարարը այն անվանել էր «հոլիվուդյան մղձավանջ»: Իրենց հերթին բրիտանացի իրավապաշտպանները պահանջում են պաշտոնական քննություն անցկացնել ծրագրի բացահայտման կապակցությամբ: Հունիսի 25-ին Liberty իրավապաշտպանական կազմակերպությունը համապատասխան հարցում ուղարկեց հատուկ տրիբունալ: Կազմակերպությունը պահանջում է գնահատել, թե Tempora-ն չի՞ խախտում արդյոք քաղաքացիների մասնավոր կյանքի իրավունքը եւ թղթակցության անձեռնմխելիությունը:**

**Կառավարական կապի բրիտանական կենտրոնի (GCHQ) Tempora ծրագրին վերաբերող նյութը հունիսի 22-ին հրապարակել էր «Գարդիան» թերթը՝ վկայակոչելով ԿՀՎ եւ ԱԱԳ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենին: Հրապարակված նյութի համաձայն, հատուկ ծառայությունը անդրատլանտյան մալուխներն է միացրել մասնավոր հեռախոսազրույցներին, էլեկտրոնային նամակագրությանը եւ սոցիալական ցանցերի հաղորդումներին հետեւելու եւ ստացված տեղեկությունների ԱՄՆ-ի հետ փոխանակելու նպատակով:**

# Միլիարդատիրուհին դարձավ ԱՄՆ առեւտրի նախարար



**ԱՄՆ Սենատը հաստատել է կին ձեռնարկատեր Պեննի Պրիցկերի թեկնածությունը երկրի առեւտրի նախարարի պաշտոնում: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**Պրիցկերի նշանակման օգտին քվեարկել են 97, դեմ՝ 1 սենատորներ: ԱՄՆ-ի պատմության մեջ նա կդառնա առաջին կինը այդ գերատեսչության ղեկավարի պաշտոնում:**

**Առեւտրի նախարարի պաշտոնը 1 տարի թափուր էր մնացել: 2012-ի հունիսին նախարար Ջոն Բրայսոնը հրաժարական էր տվել իր առաջացրած ճանապարհատրանսպորտային պատահարից հետո:**

**54-ամյա Պեննի Պրիցկերը Hyatt հյուրանոցների ցանցի հիմնադիրների մեկի դուստրն է եւ ընկերության տնօրենների խորհրդի անդամ է: Forbes հանդեսի հաշվարկների համաձայն, նրա կարողությունը կազմում է 1,85 մլրդ դոլար: Հանդեսի տվյալներով, ամենահարուստ ամերիկացիների ցանկում Պեննի Պրիցկերը զբաղեցնում է 277-րդ տեղը:**

**Նախագահ Բարաք Օբաման եւ Պեննի Պրիցկերը համագործակցում են արդեն մի քանի տարի: Կին ձեռնարկատերը մասնավորապես տնօրինել է միջոցների հանգանակությունը Օբամայի նախագահական երկու ընտրարշավների ժամանակ:**

# Մրցանակաբաշխություն՝ ստեղծագործական եւ գիտական աշխատանքի գծով

Համաշխարհային հայկական կոնգրեսը եւ Ռուսաստանի հայերի միությունը, սփյուռքի նախարարության հետ համատեղ հայտարարում են 2013թ. ստեղծագործական եւ գիտական աշխատանքի միջազգային մրցանակաբաշխություն:

Մրցույթի նպատակն է նպաստել Հայաստանի գիտական եւ ստեղծագործական մտավորականության գործունեության ակտիվացմանը, խթանել երկրի մտավոր կյանքի աշխուժացումը:

Մրցանակաբաշխությունը համագործակցում է կրթության եւ գիտության, մշակույթի նախարարությունների, ինչպես նաեւ՝ ԳԱԱ, Հայաստանի գրողների, ժուռնալիստների, նկարիչների, կոմպոզիտորների միությունների ու երաժշտական ընկերության հետ:

Մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել ինչպես Հայաստանից, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից եւ սփյուռքից:

Այս տարի ԳԱԱ 70-ամյակն է, եւ այս մրցույթը գիտության գծով կնվիրվի Գիտությունների ազգային ակադեմիայի հոբելյանին: «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթին սահմանված է 12 անվանակարգ՝ ֆիզիկա, մաթեմատիկա եւ մեխանիկա, ինֆորմատիկա, տեխնիկական գիտություններ, քիմիա, կենսաբանություն, պատմություն, սոցիոլոգիա եւ իրավագիտություն, երկրաբանություն, արվեստ, լեզու եւ գրականություն, տնտեսագիտություն, հայագիտություն եւ ազգագրություն ուղղություններով:



Մրցանակային ընդհանուր ֆոնդը կազմում է 12 միլիոն դրամ: Ինչպես երեկ Ռուսաստանի հայերի միությունում կայացած հանդիպմանը տեղեկացրեց ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար **Հրանտ Մաթեւոսյանը**, արդեն հայտեր են ստացել, ինչպես Էստոնիայից, այնպես էլ Լատվիայից եւ Ուկրաինայից:

Անդրադառնալով մրցույթի մյուս ճյուղին, որը նախատեսված է գրողների համար, նշենք, որ անցկացվում է «Գրական մրցանակաբաշխություն-21-րդ դար» նշանաբանով: Իսկ անվանակարգերը հետեւյալն են՝ արձակ, պոեզիա, դրամատուրգիա կամ մանկապատանեկան գրականություն: Մրցանակային ֆոնդը կազմում է 5,5 միլիոն դրամ՝ արձակի համար նախատեսված է 1. 650. 000 դրամ, պոեզիայի՝ 1.650.000 դրամ, իսկ դրամատուրգիայի կամ մանկապատանեկան գրականության՝ 1. 650. 000:

Գրողների միության նախագահ **Լեւոն Անանյանը** նշեց, որ ստացել են 20 հայտ, որոնցից երկուսը արձակ, տասը՝ պոեզիա, չորսից-հինգը՝ մանկական եւ այլն:

Լ. Անանյանն ընդգծեց, որ ժյուրիի կազմում ընդգրկված են ինչպես գրականության ինստիտուտից, այնպես էլ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից, գրողների միությունից, ԵՊՀ-ից մասնագետներ:

Հայտարարվել է նաեւ լրագրողական լավագույն հրապարակումների մրցույթ՝ «Մեր հավատամքը՝ պետականություն, միասնականություն, ազգային ինքնություն» թեմայով: Մրցույթին ներկայացվող հրապարակումները պետք է արտացոլեն մեր պետականության, միասնականության, ազգային ինքնության հիմնահարցերը, Հայաստանի հետագա հզորացման, բարգավաճման, ժողովրդավարացման ամրապնդման, քաղաքացիական հասարակության կայացման գործընթացները: Մրցանակային ֆոնդը կազմում է 5,5 միլիոն դրամ: Սահմանվել են հետեւյալ մրցանակները՝ տպագիր մամուլ, 3 մրցանակ՝ 500.000 դրամ, հեռուստահաղորդումներ, 2 մրցանակ՝ 500.000-ական դրամ, ռադիոհաղորդումներ, 2 մրցանակ՝ 500.000-ական դրամ, սփյուռքահայ լրատվամիջոց, 2 մրցանակ՝ 500.000-ական դրամ, ինչպես նաեւ սահմանվել է հատուկ մրցանակ Ռուսաստանի հայերի միության բազմաբնույթ գործունեությունը լուսաբանող լավագույն հրապարակումների համար՝ 500.000 դրամ:

Ժուռնալիստների միության նախագահ **Աստղիկ Գեւորգյանն** ուրախությամբ փաստեց, որ արդեն ստացել են հետաքրքրական նյութեր:

Մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել միայն Հայաստանի ժուռնալիստների միության անդամները:

Իսկ կերպարվեստի զարգացմանը նպատակաուղղված լավագույն ստեղծագործությունների մրցույթում ներառված են գեղանկարչության, քանդակի, գրաֆիկայի, դեկորատիվ կիրառական արվեստի անվանակարգեր: Մրցանակային ֆոնդը կազմում է 5,5 միլիոն դրամ: Նկարիչների միության նախագահ **Կարեն Աղամյանը** հանդիպմանը փաստեց, որ սեպտեմբերին կցուցադրվեն 100-ից ոչ պակաս նկարներ, ինչպես նաեւ ցուցահանդեսին կներգրավվեն սփյուռքի նկարիչներին:

Հայտարարվել է նաեւ լավագույն կոմպոզիտորական եւ երաժշտագիտական ստեղծագործությունների մրցույթ, որին կարող են մասնակցել այն կոմպոզիտորները ու երաժշտագետները, որոնք ունեն պրոֆեսիոնալ երաժշտական կրթություն: Իսկ մրցանակային ֆոնդը կազմում է 5,5 միլիոն դրամ:

Կոմպոզիտորական արվեստի գծով ներկայացված են հետեւյալ անվանակարգերը՝ վոկալ-սիմֆոնիկ, կոնցերտային երաժշտության ժանրում գրված ստեղծագործություն՝ 1. 280. 000դրամ, գործիքային անսամբլների համար գրված ստեղծագործություններ՝1.100.000 դրամ, խմբերգային վոկալ-գործիքային երաժշտության ժանրում գրված ստեղծագործություն՝ 250.000 դրամ: Իսկ երաժշտագիտության ասպարեզում ներառված են ինչպես գիտական հոդվածների ժողովածու, այնպես էլ երաժշտագիտական հրապարակախոսություն, մենագրություն: Մրցանակային ֆոնդը կազմում է 900.000 դրամ:

Կոմպոզիտորների միության նախագահ **Ռոբերտ Ամիրխանյանն** ուրախությամբ նշեց, որ մրցույթին հայտեր են ստացել ե՛ւ Սիրիայից, ե՛ւ Արգենտինայից: Նա փաստեց, որ արտերկրում ավելի ակտիվ են:

Հայաստանում երգչախմբային արվեստի հետագա զարգացման նպատակով հայտարարվում է նաեւ երիտասարդական երգչախմբերի հանրապետական փառատոն-մրցույթ, որին կարող են մասնակցել Հայաստանի եւ ԼՂՀ երիտասարդ երգչախմբերը, որոնց անդամների տարիքը չի գերազանցում 35-ը: Փառատոն-մրցույթը ներառում է ինչպես Կոմիտասի խմբերգերից, այնպես էլ կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանի ժողովրդական երգերի մշակումներից, եւ երգչախմբի գեղ. ղեկավարի կողմից ներկայացված ստեղծագործություն: Ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է 4 միլիոն դրամ:

Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ, պրոֆեսոր **Դավիթ Ղազարյանը** նշեց, որ վերոնշված անվանակարգում ներկայացվել է 7 հայտ:

Այս տարի նաեւ ավելացել է եւս մի անվանակարգ՝ ռեժիսորների գծով, որոնք պետք է անդրադառնան սահմանամերձ, հեռավոր գյուղերի խնդիրներին:

Երեկ՝ Ռուսաստանի հայերի միությունում կազմակերպված խորհրդակցության ժամանակ հետաքրքրական միտք առաջարկեց կոմպոզիտորների միության նախագահ Ռոբերտ Ամիրխանյանը եւ պատրաստակամություն հայտնեց ի կատար ածել. ՌԴ-ում կազմակերպել հեղինակային համերգներ, որոնց հասույթը կտրամադրվի սահմանամերջ կարիքավոր գյուղերին: Այս գաղափարին միացավ նաեւ Նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը՝ ասելով, որ Նկարիչների միությունը եւս կտրամադրի նկարներ, որոնցից գոյացած հասույթը կարող են տրամադրել այդ գյուղերին:

ՄԱՆԱՆԱ ՆՈՎԱԿԻՄՅԱՆ



# Կմեկնարկի «Արձակ 2013» մրցույթը

**«Անտարես» հոլդինգը եւ «Գրանիշ» գրական ակումբը հայտարարում են տարվա լավագույն պատմվածքի ամենամյա «Արձակ 2013» մրցույթի մեկնարկը: Մրցույթի նպատակն է խթանել արդի հայ պատմվածքի զարգացումը եւ ընթերցանության հանդեպ հանրային հետաքրքրությունը:**

**Այս տարի մրցույթին ավելացել է եւս մի անվանակարգ՝ լավագույն մանկական պատմվածք: «Անտարես» հրատարակչության տնօրեն Արմեն Մարտիրոսյանն անդրադառնալով նոր անվանակարգին, ասաց. «Հայաստանում մանկական գրականության խնդիր ունենք, քանի որ մանկագիրների միջին տարիքը 70 է, այդ իսկ պատճառով էլ մրցույթում նման նորամուծություն մտցրեցինք»:**

**Ա. Մարտիրոսյանը կես կատակ-կես լուրջ ասում է, որ ունենք հեղինակներ, որոնք կյանքում գիրք չեն կարդացել, սակայն «գրող են ծնվել»:**



**«Արձակ 2013»-ի համակարգող Արփենիկա Նիկողոսյանն իր հերթին նշեց, որ արդեն երրորդ տարին է, ինչ անցկացվում է մրցույթը. «Մրցույթի նպատակն է ժամանակակից գրականությունն ավելի տարածել եւ սիրելի դարձնել, ինչպես նաեւ նոր հեղինակների բացահայտել: Անցյալ տարի շատ դժգոհություններ եղան, որոնք հիմնված էին ամբիցիաների վրա: Այս տարի մրցույթին ներկացավող ստեղծագործությունները կհրապարակվեն առանց հեղինակի անվան»:**

**«Գրանիշ» գրական ակումբի նախագահ Կարեն Անտաշյանն ուրախությամբ փաստում է, որ տարեցտարի ավելանում են կայացած հեղինակների հայտերը մրցույթին: Նա տեղեկացրեց, որ երբ ստեղծագործությունները տեղադրվում են կայքէջում, ծիծաղելի դեպքեր են գրանցվում: Ստեղծագործողը միեւնույն համակարգչից, տարբեր էջերով մտնում եւ դրական մեկնաբանություններ է գրում իր ստեղծագործության տակ, կամ էլ գործընկերոջ նյութի տակ բացասական կարծիքներ արձանագրում:**

**«Գրանիշ» գրական ակումբի նախագահը եւս մեկ անգամ շեշտեց, որ մրցույթի մասնակիցների տարիքային ներքին շեմը պետք է լինի 18: Մրցույթին կարող են մասնակցել 2012 թվականին հոկտեմբերի 15-ից հետո ստեղծված հայերեն տպագիր եւ անտիպ պատմվածքները: Յուրաքանչյուր հեղինակ կարող է ներկայացնել միայն մեկ պատմվածք, որի ծավալը չի կարող գերազանցել 14.000 նիշը (ներառյալ բացատները): Մրցույթին ներկայացված պատմվածքը մինչեւ «Արձակ» մրցույթի ամփոփումը չպետք է ներկայացված լինի որեւէ այլ մրցույթի:**

**Լավագույն պատմվածքների ժողովածուն կհրատարակվի առանձին գրքով: «Անտարես» հրատարակչությունը լույս կընծայի մեծ մրցանակին արժանացած եւ միաժամանակ առցանց քվեարկությամբ հաղթած պատմվածքի հեղինակի գիրքը:**

**Արդեն լույս են տեսել նախորդ տարիներին եզրափակիչ փուլ անցած լավագույն պատմվածքների ժողովածուները: Ի դեպ, կա նաեւ համագործակցության նախագիծ, ըստ որի գրքերը կվերահրատարակվեն վրացերեն ու կպատռվեն նաեւ Վրաստանում:**

**Նշենք, որ մրցույթին մասնակցելու համար պետք է ardzak.mrcuyt@yahoo.com փոստին ուղարկել ստեղծագործությունը եւ մասնակցության հայտի լրացված ձեւը՝ նամակի վերնագրում նշելով «Արձակ 2013» արտահայտությունը: Հայտերն ընդունվում են 2013թ. հուլիսի 1-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը ներառյալ: Մրցանակների շնորհման արարողությունը կկայանա արդյունքների ամփոփումից հետո՝ մինչեւ տարեվերջ:**

**Հաղթողներին որպես մրցանակ կշնորհվեն «Արձակ 2013» մրցանակի դափնեկրի վկայագիր եւ դրամական պարգեւ՝ մեծ մրցանակ՝ 200,000 դրամ, հատուկ մրցանակներ՝ 100,000-ական դրամ, լավագույն մանկական պատմվածք՝ 100,000 դրամ:**

**Բացի մրցասյանի սահմանած մրցանակային տեղերից, մրցանակ կտրվի նաեւ «Իմ հեղինակը» անվանակարգում, որը կորոշվի ընթերցողների առցանց քվեարկությամբ՝ Ֆեյսբուք սոցիալական ցանցում: Մրցույթին ներկայացված պատմվածքների համար մրցույթի գործընկերները կսահմանեն մրցանակներ եւ պարգեւներ՝ առանձնացնելով այն հատկանիշները ու չափանիշները, որոնք իրենք են կարեւորում:**

**Այս տարի մրցույթի ժյուրիի անդամներն են՝ կինոգետ եւ թարգմանիչ Զավեն Բոյաջյանը, լեզվաբան Դավիթ Գյուրջինյանը, գրականագետ, ԵՊՀ դասախոս Հայկ Համբարձումյանը, գրաֆնադաս Հասմիկ Հակոբյանը, գրականագետ Գոհար Աfեյանը, մանկագիր, թարգմանիչ Նունե Թորոսյանը եւ լեզվաբան Նարինե Վարդանյանը:**

ՄԱՆԱՆԱ ՆՈՎԱԿԻՄՅԱՆ

# Հենրիխ Մխիթարյանը մոտ է «Լիվերպուլ» տեղափոխվելուն

*Դորտմունդի «Բորուսիան» միացավ նրա համար պայքարին*

Հենրիխ Մխիթարյանի տրանսֆերի հարցը շարունակում է մնալ լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Երեկ երեկոյան ИТАР-ТАСС-ը հաղորդագրություն տարածեց, որ Հենրիխ Մխիթարյանը գտնվում է Լոնդոնում: Այդ մասին գործակալության թղթակցին հայտնել են այն հյուրանոցի աշխատակիցները, որում հանգրվանել է Հենրիխը: Իսկ 101greatgoals.com-ը կայքում տեղադրել է Հենրիխի լուսանկարը հյուրանոցում: Լոնդոնից Մխիթարյանը մեկնելու է Լիվերպուլ, որտեղ էլ ենթադրվում է, որ կկայանա երկար սպասված գործարքը:

Իսկ մինչ այդ ըստ գերմանական «Բիլդի» հայ ֆուտբոլիստին իր կազմում ցանկանում է ընդգրկել Դորտմունդի «Բորուսիան», որը պատրաստ է «Շախտյորին» 25 մլն եվրո վճարել: «Բիլդը» չի բացառել, որ «Բորուսիայի» ղեկավարությունը բանակցում է Մխիթարյանի հետ: Թիմի գլխավոր մարզիչ Յուրգեն Կլոպը Մխիթարյանին դիտարկում է որպես Մարիո Գյոտցեի փոխարինող, որը տեղափոխվել է Մյունխենի «Բավարիա»:

Իսկ ահա ուկրաինական «Взгляд»-ի թղթակցի կարծիքով, Մխիթարյանի շուրջը ներկայումս ստեղծված իրավիճակը կարող է ուկրաինական ֆուտբոլի ամենաաղմկահարույց պատմություններից մեկը դառնալ: Մխիթարյանը պետք է հունիսի 23-ին միանար Ավստրիայում ուսումնամարզական հավաք անցկացնող «Շախտյորին»: Սակայն նա Երեւանից մեկնեց Փարիզ: «Շախտյորի» գլխավոր տնօրեն Սերգեյ Պալկինն էլ սպառնացել էր, որ եթե Մխիթարյանը մոտ օրերս չմիանա թիմակիցներին, ապա խոշոր տուգանքի կենթարկվի:

«Взгляд»-ի թղթակիցը խնդրել է ստեղծված իրավիճակը մեկնաբանել ֆուտբոլային հայտնի գործակալ Դմիտրի Սելյուկին, որը մինչ այդ զբաղվում էր Մխիթարյանի տրանսֆերային գործերով:

«Վերջին շրջանում այլեւս չեմ աշխատում Հենրիխի հետ: Նա շատ խորհրդականներ ունի: Գուցե հենց նրանցից մեկն էլ համոզել է Հենրիխին, որ նա չհամագործակցի ինձ հետ: Որքան ինձ է հայտնի, Մխիթարյանին նույնիսկ արգելել են շփվելու ինձ հետ: Ես կռահում եմ, թե ով է պատկողմնորոշում Մխիթարյանին: Դա իտալացի գործակալ Մինո Ռայոլան է: Կարծում եմ, որ հենց նրա դրդմամբ է Հենրիխը որոշել կոնֆլիկտի մեջ մտնել «Շախտյորի» հետ: Ի՞նչ հույսեր ունեն նրանք: Հավանաբար ցանկանում են այդ կերպ «Շախտյորին» ստիպել, որ Մխիթարյանին բաց թողնի «Լիվերպուլ»: Սերգեյ Պալկինն ասում է, որ «Լիվերպուլը» կապ չի՞ հաստատել «Շախտյորի» հետ: Չգիտեմ, ես այլ տեղեկատվություն ունեմ: Իսկ ընդհանրապես կարող է իրավիճակն այնպես փոփոխվել, որ Մխիթարյանն ու Ռայոլան զղջան, որ «Շախտյորի» հետ նման խաղեր են խաղացել», նշել է Դմիտրի Սելյուկը:



Իրոք որ չպետք է խախտել խաղային կարգապահությունը: «Շախտյորի» ֆուտբոլիստներն արդեն սկսել են մարզումներն ու ստուգողական հանդիպումներ են անցկացրել Ավստրիայում, այժմ էլ մասնակցելու են «Սպարտակի» եւ «Զենիթի» հետ նախատեսված մրցախաղերին: Հավաքից հետ ընկնելը կարող է բացասաբար անդրադառնալ Մխիթարյանի մարզավիճակի վրա: Իսկ ամենանբաղձալին կլինի այն, եթե «Շախտյորը» կարգապահական եւ դրամական տույժեր կիրառի Հենրիխի հանդեպ:

Մեզ հայտնի չեն ակումբի հետ Հենրիխի պայմանագրի կետերը: «Շախտյորի» գլխավոր մարզիչ Միրչա Լուչեսկուն ժամանակին հայտարարել էր, որ հայ ֆուտբոլիստի տրանսֆերային արժեքն ակումբը սահմանել է 30 մլն եվրո: Սակայն հայտնի չէ, թե ինչպես է ձեւակերպված պայմանագրի այդ կետը: Նշված գումարի վճարման դեպքում ակումբը պարտավո՞ր է ֆուտբոլիստի համաձայնությամբ նրան թույլատրել տեղափոխվելու այլ թիմ, թե՞ ակումբն իր հայեցողությամբ է որոշելու այդ հարցը: Ամեն դեպքում, յուրաքանչյուր քայլ կատարելիս Հենրիխ Մխիթարյանը պետք է շատ զգույշ լինի, որպեսզի ստեղծված խառնաշփոթ իրավիճակում չտուժի:

## Անչելոտին պաշտոնապես գլխավորեց «Ռեալը»

Մադրիդի «Ռեալը» պաշտոնապես հայտարարել է, որ նոր մրցաշրջանում թիմը կգլխավորի Կառլո Անչելոտին: 47-ամյա իտալացի մասնագետը 2 տարվա պայմանագիր է կնքել ակումբի հետ: Նրա տարեկան աշխատավարձը կկազմի 8 մլն եվրո: Որպես փոխհատուցում «Ռեալը» ՊՍԺ-ին 4,5 մլն եվրո կվճարի: ՊՍԺ-ում Անչելոտիին կփոխարինի Լորան Բլանը:

Դեռեւս մայիսին սկսեցին խոսել, որ Կառլո Անչելոտին հեռանալու է ՊՍԺ-ից եւ գլխավորելու է Մադրիդի «Ռեալը»: Այդ ժամանակ արդեն հայտնի էր, որ «Ռեալի» գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուն հեռանալու է թիմից: «Ռեալի» նախագահ Ֆլորենտինո Պերեսը հայտարարել է, որ թիմի ղեկին տեսնում է Կառլո Անչելոտիին:



Գործարքի իրականացմանը խոչընդոտում էր այն հարցը, թե կկարողանա՞ ՊՍԺ-ի ղեկավարությունը համարժեք փոխարինող գտնել Անչելոտիին: Չէ՞ որ վերջինիս օրոք ՊՍԺ-ն վերջին 19 տարիների ընթացքում առաջին անգամ նվաճել էր Ֆրանսիայի չեմպիոնի տիտղոսը: ՊՍԺ-ի գլխավոր մարզչի պաշտոնի թեկնածուների թվում նշվում էին Արսեն Վենգերը, Ռոբերտո Մանչինին, Գուս Հիդինքը, Ռաֆայել Բենիտեսը եւ նույնիսկ ՌԴ հավաքականի գլխավոր մարզիչ Ֆաբիո Կապելլոն: Ի վերջո, ակումբի ղեկավարությունը կանգ առավ Ֆրանսիայի հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Լորան Բլանի թեկնածության վրա:

«Ռեալում» Անչելոտիին կօգնի թիմի նախկին ֆուտբոլիստ Զինեդին Զիդանը, որը զբաղեցնում էր ակումբի մարզական տնօրենի պաշտոնը: Նա պետք է ապահովի ֆուտբոլիստների շփումը նոր գլխավոր մարզչի հետ: Ժամանակին Զիդանը «Յուվենտուսում» խաղացել է Կառլո Անչելոտիի գլխավորությամբ՝ 2 անգամ նվաճելով Իտալիայի չեմպիոնի տիտղոսը:

## Իգուաինի տրանսֆերը ռեկորդային կլինի «Արսենալի» համար

«Արսենալը» համաձայնեցրել է Մադրիդի «Ռեալի» հարձակվող Գոնսալո Իգուաինի հետ կնքվելիք պայմանագրի կետերը: Նրա տեղափոխության համար անգլիական ակումբը «Ռեալին» 25,5 մլն եվրո կվճարի, իսկ ֆուտբոլիստի շաբաթական աշխատավարձը կկազմի 151 հազար եվրո:

Եթե գործարքը կայանա, ապա Իգուաինի տրանսֆերը կդառնա «Արսենալի» պատմության մեջ ամենաթանկը: Իսկ մինչ այդ ռեկորդային է համարվում Անդրեյ Արշավինի տրանսֆերը: Նրա դիմաց «Արսենալը» «Զենիթին» 13,3 մլն եվրո է վճարել:

Իգուաինը «Ռեալի» կազմում հանդես է գալիս 2007-ից: Նա թիմի կազմում անցկացրել է 216 խաղ, խփել է 121 գոլ:

**ՇԱԽՄԱՏ**

## Մրցաշարում երկիշխանություն է



**Վառնայում ընթացող շախմատի միջազգային մրցաշարի 7-րդ տուրում Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը ոչ-ոքի խաղաց Պետար Առնաուդովի հետ ու վաստակեց 6 միավոր: Բրազիլահայ շախմատիստին միավորներով հավասարվեց բուլղարացի Ռադոսլավ Դիմիտրովը, որը հաղթեց Եվգենի Յանեւին: Պետար Առնաուդովը մրցաշարի առաջատարներին զիջում է կես միավորով:**

**Բուլղարահայ Վալենտին Փանբուկչյանը պարտվեց Մոմչիլ Նիկոլովին: Փանբուկչյանը 4 միավորով 30-րդ տեղում է:**

## Հաջողությունը երես է թեքել Էլինա Դանիելյանից

**Շախմատի Գրան պրիի մրցաշարի 9-րդ տուրում Էլինա Դանիելյանը ոչ-ոքի խաղաց Տատյանա Կոսինցեւայի հետ: Հաղթություն կնքեցին նաեւ Բելա Խոթենաշվիլին ու Հարիկա Դրոնավալին, Աննա Մուզիչուկն ու Բաթչիմեգ Թուվշինթուգսը, Համպի Կոնեռուն եւ Նանա Ձագնիձեն: Վիկտորիա Չմիլիտեն հաղթեց Աննա Ուշենինային, Անտուանետա Ստեֆանովան պարտության մատնեց Օլգա Գիրյային:**

**Ավարտական 2 տուրերից առաջ Էլինա Դանիելյանը 3 միավորով շարունակում է եզրափակել աղյուսակը: 6,5 միավորով առաջատարը Համպի Կոնեռուն է: 6 միավոր ունի Աննա Մուզիչուկը:**

**Այսօր կայանալիք 10-րդ տուրում Դանիելյանը կմրցի Բելա Խոթենաշվիլու հետ:**

## Մեսին 10 մլն եվրո հարկ վճարեց

**«Բարսելոնի» հարձակվող Լիոնել Մեսին, որ մեղադրվում էր հարկերի վճարումից խուսափելու մեջ, ինքնակամ 10 մլն եվրո է փոխանցել Իսպանիայի հարկային ծառայությանը: Այսպիսով, արգենտինացի ֆուտբոլիստը որոշեց իր վրայից հանել մեղադրանքը:**

**Հիշեցնենք, որ Մեսին եւ նրա հայրը մեղադրվում էին 4,5 մլն եվրոյի հասնող հարկային պարտավորություններից խուսափելու մեջ:**

## Յորոն հանդես կգա «Բնեյ Եհուդայում»

**Հայաստանի ավարտված առաջնությունում «Շիրակի» լավագույն ռմբարկու Լամին Լի Յորոն, որ վերջերս վերադարձել էր Սենեգալ, պայմանագիր է կնքել իսրայելական «Բնեյ Եհուդայի» հետ: Հիշեցնենք, որ անցյալ տարի «Շիրակը» Եվրոպայի լիգայի որակավորման 2-րդ փուլում մրցել էր իսրայելական ակումբի հետ ու դուրս էր մնացել հետագա պայքարից: Այն ժամանակ Իսրայելի թիմի ներկայացուցիչները ծանոթացել էին Յորոյի խաղային ունակություններին:**

## «Շիրակը» հաղթեց բարձրագույն խմբի նորեկին

**Չեմպիոնների լիգայի մրցաշարին նախապատրաստվող «Շիրակը» ստուգողական խաղում 2-0 հաշվով պարտության մատնեց «Ալաշկերտին»: Աչքի ընկան թիմի լեգեոնականներ Ջորջ Օդիանբոն եւ Ֆոֆանա Բեկոն:**

**Նախորդ համարում տեղեկացրել էինք, որ Սան Մարինոյի չեմպիոն «Տրե Պենեի» խնդրանքով «Շիրակը» համաձայնվել է չեմպիոնների լիգայի առաջին հանդիպումն անցկացնել մրցակցի հարկի տակ: Սակայն ՈւԵՖԱ-ն մերժել է «Տրե Պենեի» խնդրանքը, ուստի հուլիսի 2-ին կայանալիք առաջին խաղում «Շիրակը» հանդես կգա Գյումրիում:**

## Հայ թեթեւաատլետները հաջող ելույթներ ունեցան

**Սլովակիայում կայացած թեթեւ ատլետիկայի Եվրոպայի թիմային առաջնության 3-րդ խմբի գավաթի մրցումներում հաջող հանդես եկան հայ թեթեւաատլետները, որոնցից 4-ը դարձան մրցանակակիրներ:**

**Հեռացատկում Վարդան Փահլեւանյանը 7,74 մետր արդյունքով գրավեց 2-րդ տեղը: Արծաթե մեդալների արժանացան նաեւ եռացատկորդ Լեւոն Աղասյանը (15,67 մետր) եւ Ամալյա Շառոյանը, որը 400 մ վազքատարածությունը հաղթահարեց 60,05 վրկ-ում: 1500 մետր վազքում Աշոտ Հայրապետյանը 3-րդն էր: Հայաստանի հավաքականը առաջնության մասնակից 15 թիմերի մրցապայքարում զբաղեցրեց 9-րդ տեղը:**

## Հայաստանը կներկայացնեն 3 սամբիստներ

**Վենեսուելայի մայրաքաղաք Կարակասում մեկնարկող սամբոյի աշխարհի գավաթի հերթական փուլում, որում կխաղարկվեն Ա. Ասլախանովի հուշամրցաշարի պարգեւները, Հայաստանից մրցագորգ դուրս կգան 3 սամբիստներ: Մեր հանրապետության մարզական պատիվը կպաշտպանեն ստեփանակերտցիներ, աշխարհի եւ Եվրոպայի առաջնությունների հաղթողներ ու մրցանակակիրներ Մավրիկ Նասիբյանը (74 կգ), Աշոտ Դանիելյանը (82 կգ) եւ Դավիթ Գրիգորյանը (90 կգ):**

## «Բեշիքթաշն» ու «Ֆեներբահչեն» զրկվել են եվրոգավաթների մասնակցությունից

**ՈւԵՖԱ-ն թուրքական 2 ակումբների՝ «Ֆեներբահչեին» եւ «Բեշիքթաշին» զրկել է եվրոգավաթների մասնակցության իրավունքից: «Բեշիքթաշը» չի մասնակցի Եվրոպայի լիգայի այս տարվա խաղարկությանը: Իսկ «Ֆեներբահչեն» զրկվել է առաջիկա 3 խաղարկություններին մասնակցելուց, եթե եվրոգավաթների մրցաշարերի իրավունք ստանա: ՈւԵՖԱ-ի այս որոշումը կապված է պայմանավորված խաղերին այդ ակումբների հնարավոր մասնակցությամբ:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Օրվա հետքերով

## Կամ հախուռն դատապարտել, կամ հիացմունքով գովել

*1-ին էջից*

Բոլոր դեմքերում քաղաքական ուժերն ավելի մեծ լուֆթ ունեն մտահոգություններ բարձրացնելու, քան գործադիրը, ու այդ մտահոգությունները երկրի ղեկավարները դեմ կտան դրսի դեմ տվողներին:

Որոնք էլ լինեն պատճառները՝ մեր կուսակցությունները պետության համար դարակազմիկ որոշումների համար ի վերջո պատասխանատվություն ստանձնել եւ ավարտուն տեսակետ առաջ մղել ի վիճակի չեն: Նրանք սպասում են գործադիրի կամ երկրի ղեկավարի գործողություններին՝ հետո մի բան ասելու կամ անելու համար: Վերջերս էլ շատ վտանգավոր մի միտք սկսեց շրջանառվել, թե կարելի է հանրաքվեի միջոցով որոշել այս կամ այն անդամակցության հարց: Եվ կամ՝ «Գելապ» են խաղացնում, թե Հայաստանի բնակչության 60 տոկոսից ավելին կողմ է Եվրասիական միությանը (էն էլ՝ Եվրասիական զարգացման բանկի պատվերով հարցմամբ): Լավ, ընտրություններով հարց որոշել չկարողացող ժողովրդի հետ հանրաքվե անցկացնելու խաղե՞րն են մնացել, կամ ո՞վ չգիտի, թե ինչպե՞ս կարող են անցկացվել հանրաքվեն կամ սոցիոլոգիական հարցումները: Սա մի կողմից պատասխանատվությունը հեռացնելու միջոց է, մյուս կողմից՝ կուսակցությունների հստակ դիրքորոշումների բացակայության արդյունք վերը նշված երկու հարցի վերաբերյալ:

Կամ՝ մեր կուսակցականները երբեք չեն ասում՝ այ Հեֆերն, այ ֆլանայ ֆստան, մեր տնտեսության կամ պետական նշանակության հարցերի վերաբերյալ ինչո՞ւ եք տարատեսակ հայտարարություններ անում, մեզ հարցրե՞լ եք...

Հիշեցնենք, որ ՌԴ կողմից Ադրբեջանին շուրջ 1 միլիարդ դոլարի ցամաքային սպառազինություն մատակարարելու կապակցությամբ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան հայտնել էր, որ Ռուսաստանն Ադրբեջանին զենք է վաճառում, քանի որ դա բիզնես է, եւ Ռուսաստանը նույնկերպ զենք է վաճառում տասնյակ այլ երկրների, այդ թվում՝ նաեւ ոչ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամների:

Արդյո՞ք Հայաստանի համար կարեւոր որոշումների ճարտարապետը միայն նախագահն է, որ բոլորը միայն նրա կարծիքին են սպասում ամեն հարցում: Այդպիսի մեծ պատասխանատվություն հենց ինքը՝ նախագահը չէր ուզենա, քանի որ որեւէ երկրի նախագահ ներկայացնում է իր երկրի ժողովրդի կարծիքը, իսկ ժողովրդի կարծիքն արտահայտողներ են պետք:

Հենց թեկուզ երեկվա օրինակը, երբ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան Երեւանում հայտարարություն արեց, թե Ադրբեջանին զենք վաճառելով Ռուսաստանը չի անտեսում տարածաշրջանում ուժերի հավասարակշռության պարագան: Ու նրան մի քանի, ընդ որում՝ ընդդիմադիր ու իշխանական կուսակցություններից գոնե ԶԼՄ-ներով չպատասխանեցին, թե զենք վաճառելը հավասարակշռությո՞ւն է, կամ ռազմավարական գործընկերն այդպե՞ս է հավասարակշռություն ստեղծում, թե չէ՝ 1 մլրդը որ բիզնես է՝ գիտենք: Մի բան ասեիք՝ ո՞վ պետք է պետությունը ներկայացնողների թիկունքը պահի:

Ու պաշտպանության նախարարն է միայն, որ ի պաշտոնե մտահոգվում է (ՀԱՊԿ երկրորդ ռազմավարական-քաղաքական ֆորումին) Ադրբեջանի սպառազինությամբ՝ բալանսի խախտման վերահսկելիությունը նաեւ ուղղելով ռազմավարական գործընկերոջը, ով համ պետք է զենք վաճառի տարածաշրջանի երկրներին, համ էլ վերահսկի, որ նրանք այդ միջոցները չօգտագործեն, իսկ Հայաստանն էլ ստիպված է ավելի ու ավելի որակական շեշտադրումներ անել իր սպառազինության մեջ:

Էս մասին բա խոսենք, սպասում ենք ինչին որ...

Լավ է դեռ մի երկու կենս կարծիք կային, այնուամենայնիվ, «Ժառանգության» Թեւան Պողոսյան էր զգուշացնում. Ցանկացած երկիր, որը Ադրբեջանին զինտեխնիկա կվաճառի, պետք է հասկանա, որ նպաստում է նրան, որ տարածաշրջանում ստեղծվում է «սառը պատերազմի» նման իրավիճակ, ինչի արդյունքում տարածաշրջանում ոչ թե ավելի քիչ, այլ ավելի շատ սպառազինություն է լինում»: Ու «Ազատ դեմոկրատներն» էին հայտարարել, թե հարձակողական նշանակություն ունեցող ցամաքային սպառազինությունների մատակարարումը փաստացիորեն անտեսում է Ադրբեջանի իշխանությունների կողմից ԼՂ հիմնահարցը ռազմական ճանապարհով լուծելու՝ բազմիցս հայտարարված պատրաստակամությունը եւ ավելի հավանական դարձնում ՀԱՊԿ-ի հիմնադիր անդամ հանդիսացող ՀՀ-ի հանդեպ ռազմական ագրեսիան՝ ՀԱՊԿ-ի մեկ այլ անդամ Ռուսաստանի տրամադրած զինտեխնիկայի հնարավոր կիրառման հաշվին»:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Տեղեկատվական Տեխնոլոգիաների գործընթացների հասունության մակարդակները ըստ CobIT 4.1 ստանդարտի ստուգելու համար մասնագիտացված կազմակերպության կամ անհատ մասնագետ ընտրելու համար հրապարակային մրցույթի կազմակերպման մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ ՀՀ կենտրոնական բանկի Տեղեկատվական Տեխնոլոգիաների գործընթացների հասունության մակարդակները ըստ CobIT 4.1 ստանդարտի ստուգելու նպատակով մասնագիտացված կազմակերպություն կամ անհատ մասնագետ ներգրավելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն անձինք (այսուհետ՝ Մասնակից), որոնք ունեն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներ:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետը՝ 2013թ. օգոստոսի 05-ին, ժամը 16:00:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամը՝ 2013թ. օգոստոսի 08-ին, ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. օգոստոսի 13, ժամը 16-00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, 59-28-05, 59-28-02, ներքին՝ 18-05, 18-02:

***ՀՀ ԿԲ Հասարակայնության հետ կապերի ծառայություն***

*Հաստատված է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության 12 դեկտեմբերի 2001 թ. թիվ 465 հրամանով տարեկան (ամբողջական փաթեթով միջանկյալ) հաշվետվության ներկայացման համար*

*Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998 թ. հ 740 որոշմամբ սահմանված կազմակերպությունների վրա*

*Ձեւ հ. 1*

**Հաշվապահական հաշվեկշիռ առ 01 հունվարի 2013 թ.**

| | | Ծածկագիրը |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | «Եվրոպարկ Առեւտրի կենտրոն» ԲԲԸ | |
| Փաստացի գործունեության | 1. Առեւտրի իրականացման վայր | |
| Հիմնական երկու տեսակը | | |
| Պետական ռեգիստրում | | |
| գրանցման համարը | | 222.13024720 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 01849292 |
| Չափի միավորը | | Հազար դրամ |
| Գտնվելու վայրը | Ք. Երեւան, Աթենքի 10 | |
| Փաստացի գործունեության վայրը | Ք. Երեւան, Աթենքի 10 | 010-58-72-21 |

| ԱԿՏԻՎ տարվա | տող | Նախորդ վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 676238 | 670272 |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | | 500 |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 050 | 111552 | 106552 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվ | 080 | 787790 | 777324 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 160 | 690 | 120 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 4098 | |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 293 | 5388 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ՝ | 220 | 5081 | 5508 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 792871 | 782832 |

| ՊԱՍԻՎ տարվա | տող | Նախորդ վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (Բաժնեհավաք) Կապիտալի զուտ գումար | 240 | 104700 | 104700 |
| Էմիսիոն Եկամուտ | 250 | 12509 | 12509 |
| Կուտակված շահույթ | 270 | -7178 | -19128 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝ | 290 | 124019 | 124019 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 234050 | 222100 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 330 | 557171 | 557171 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | 557171 | 557171 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | 532 | 70 |
| Ստացած ընթացիկ կանխավճարներ | 400 | 36 | |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 954 | 3348 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր սոց. Ապ. Գծով | 420 | 128 | |
| Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ | 480 | | 143 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 1650 | 3561 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 792871 | 782832 |

***Ղեկավար*** ***Ա. Աղաբաբյան***
***Գլխավոր հաշվապահ*** ***Շ. Սարգսյան***

*Հաստատված է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության 12 դեկտեմբերի 2001 թ. թիվ 465 հրամանով տարեկան (ամբողջական փաթեթով միջանկյալ) հաշվետվության ներկայացման համար Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998 թ. հ 740 որոշմամբ սահմանված կազմակերպությունների վրա*

*Ձեւ հ. 2*

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ առ 31.12.2012 թ.**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան աճողական) | Հաշվետու տարվա միջանկյալ ժամանակաշրջան |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացման հասույթ | 010 | 23401 | 456360 |
| Իրացված արտադրանքների, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | | -449995 |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 23401 | 6365 |
| Իրացման ծախսեր | 040 | -137 | |
| Վարչական ծախսեր | 050 | -6487 | -21654 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝ | 070 | | 36181 |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 16777 | 20892 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 16777 | 20892 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 16777 | 20892 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | 629 | 4178 |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի | 180 | 16147 | 16714 |

***Ղեկավար*** ***Ա. Աղաբաբյան***
***Գլխավոր հաշվապահ*** ***Շ. Սարգսյան***

**Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորական եզրակացություն «ՊՐԵՍ ՍՏԵՆԴ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն 31 դեկտեմբերի 2012թ.**

«ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

*Պռոշյան 2/1, Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն*
*Լիցենզիա/License N ԱՃ/ATS 072 Հեռ/Tel: (374 10) 229 238*
*իրավ. հասցե՝ Գր. Արծրունու 78/3 շ, բն. 47 Ֆաքս/Fax: (374 10) 229 278*

**Անկախ աուդիտորական եզրակացություն**

*«ՊՐԵՍ ՍՏԵՆԴ» ՍՊԸ-ի մասնակիցներին,*

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՊՐԵՍ ՍՏԵՆԴ» ՍՊԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրությունները:

**Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվություն**

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

**Աուդիտորի պատասխանատվություն**

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում:

Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մեր համոզմամբ՝ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

*3 մայիսի, 2013թ.*

***Անիկ Մարտիրոսյան*** ***Տնօրեն-Բաժնետեր***
***Տաթևիկ Հարությունյան*** ***Աուդիտոր-բաժնետեր***

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

| Հազար դրամ | Ծանոթ. | 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| Ակտիվներ | | | |
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 864,231 | 919,122 |
| Ոչ նյութական ակտիվներ | 5 | 14,078 | 9,180 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 6 | 5,718 | 18,147 |
| Նվազագույն շահութահարկ | | 61,127 | 43,840 |
| Տրված կանխավճարներ | | 23,950 | 27,283 |
| | | 969,104 | 1,017,572 |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | |
| Պաշարներ | 7 | 236,987 | 271,734 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 8 | 159,066 | 214,137 |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 9 | 35,942 | 24,360 |
| | | 431,995 | 510,231 |
| Ընդամենը ակտիվներ | | 1,401,099 | 1,527,803 |
| Սեփական կապիտալ և պարտավորություններ | | | |
| *Կապիտալ և պահուստներ* | | | |
| Կանոնադրական կապիտալ | 10 | 50 | 50 |
| Կուտակված վնաս | | (135,410) | (160,427) |
| | | (135,360) | (160,377) |
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Վարկեր փոխառություններ | 11 | 631,701 | 655,809 |
| | | 631,701 | 655,809 |
| *Ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Վարկեր փոխառություններ | 11 | 388,776 | 205,693 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 12 | 515,982 | 826,678 |
| | | 904,758 | 1,032,371 |
| Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ | | 1,401,099 | 1,527,803 |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2013թ. մայիսի 3-ին՝

***Տնօրեն*** ***Էռնեստ Սմբատյան***
***Գլխավոր հաշվապահ*** ***Աղասի Պողոսյան***

**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**

| Հազար դրամ | Ծանոթ. | 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|
| Հասույթ | 13 | 3,526,907 | 3,461,099 |
| Վաճառքի ինքնարժեք | 14 | (2,504,894) | (2,400,923) |
| Համախառն շահույթ | | 1,022,013 | 1,060,176 |
| Այլ եկամուտներ | | 16,679 | 16,238 |
| Իրացման ծախսեր | 15 | (713,969) | (685,395) |
| Վարչական ծախսեր | 16 | (147,355) | (186,465) |
| Այլ ծախսեր | | (22,373) | (132,647) |
| Գործառնական գործունեությունից շահույթ | | 154,995 | 71,907 |
| Ֆինանսական ծախսեր | 17 | (76,691) | (70,675) |
| Այլ ֆինանսական հոդվածներ | 18 | (31,145) | (17,750) |
| Շահույթ մինչև հարկերը | | 47,159 | (16,518) |
| Շահութահարկի գծով փոխհատուցում | 19 | (22,142) | 18,147 |
| Տարվա շահույթ | | 25,017 | 1,629 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | - | - | |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | | 25,017 | 1,629 |

***Տնօրեն*** ***Էռնեստ Սմբատյան***
***Գլխավոր հաշվապահ*** ***Աղասի Պողոսյան***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 26.6.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: